Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

8276

331.1
U - 89

A.B 20001

010

331.1
Հ-89

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

32

# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**ԿՆՔՎԱԾ**

ՍԽՀՄ ԿԱՊԻ ԳՈՐԾԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱ-
ԿԱՆ ԿՈՄԻՏԵՑԻ ՅԵՎ ՍԽՀՄ ՓՈՍՏ-ՀԵՌԱԳՐԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՄԻՋԵՎ

300
686-ՀԱ

ԹԱՐԳ. ՓՀԺԿ-Ի ՊԱՇՏՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ

ԹԻՖԼԻՍ — 1925

331.1
Ա-89
7737-ԱԿ
300
Զ686-ՀԱ

Главлит № 792. Тифлис Тираж 100
Թիֆլիս, Ժ. Տ. Գ. Խ. Պ. Տր. 4-դ տպ. Պուշկ. փ. № 3

# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1\. Սույն պայմանագիրը կնքված է մի կողմից ՍԽՀՄ Կապի Գործավորների Միության Կենտրոնական Կոմիտեյի, որը հետագայում կոչվելու յէ «Միություն» և մյուս կողմից ՍԽՀՄ Փոստ-Հեռագրի Ժողովրդական Կոմիսարիատի—հետագայում «ՓՀԺԿ»-ի միջև։

2\. Պայմանագիրը տարածվում է ինչպես նրա կնքման ժամանակ գործող ՓՀԺԿ-ի հիմնարկների և ձեռնարկների բոլոր գործավորների վրա, նույնպես նաև նոր բացվելիք, նմանապես տեղական միջոցներով պահվելուն փոխադրված և փոխադրվելիք Փ.-Հ. ձեռնարկների գործավորների վրա։

*Ծանոթ.* — Պայմանագիրը չի տարածվում՝

ա) այն անձերի վրա, որոնք կապի շրջանում աշխատում են ըստ զուգավարության սկզբունքի (Շրջգործկոմներին կից ոժանդակիչ պունկտերի վարիչների, յերկաթուղու կայարանների, փոստային գործակալների վրա և այլն).

բ) այն անձերի վրա, որոնք ժամանակավոր բնույթ կրող աշխատանքներ են կատարում (հեռագրի, հեռախոսի գծերի և կայարանների կառուցման և նորոգման սահմաններում), որոնց աշխատանքի պայմանները կարգավորվում են Միության տեղական մարմինների և ՓՀԺԿ-ի հատուկ համաձայնություններով։

300

3. Պայմանագիրը կնքվում է 11 ամսով և մտնում է ուժի մեջ 1924 թվի նոյեմբերի 1-ից։

Ծանոթ.—1. Վարչությունը պարտավորվում է մասնագետների հետ իր կնքած բոլոր անհատական պայմանագրերի պատճեները ներկայացնել Միությանը։

2. Հեռավոր և կլիմայական տեսակետով վնասակար վայրերում գտնվող ՓՀԺԿ-ի հիմնարկների և ձեռնարկների գործավորների աշխատանքի պայմանները կարգավորվում են սույն պայմանագրին կցած լրացուցիչ համաձայնությամբ։

4. Պայմանագրի ժամկետի գործողության սահմաններում նրա առանձին կետերը կամ մասերը կարող են փոփոխվել կամ լրացվել պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ։ Փոփոխությունները մտնում են ուժի մեջ պայմանավորվող կողմերի ստորագրելու մոմենտից։

5. Բոլոր մեկնաբանությունները, վորոնք վերաբերում են պայմանագրի կիրառմանը և նրա առանձին կետերի կամ մասերի փոփոխությանը, հրատարակվում են պայմանավորվող կողմերի միացյալ ստորագրությամբ. հակառակ դեպքում, նրանք համարվում են անվավեր և չպետք է գործադրվեն։

6. Պայմանագրի գործողության ժամկետը վերջանալուց յերկու ամիս առաջ, կողմերը պարտավոր են ձեռնարկել նոր ժամկետի պայմանագրի կնքմանը։ Սույն պայմանագրի 3 րդ կետում մատնանշած ժամկետը լրանալուց հետո դադարում է նրա գործողությունը։

7. Պայմանագրի գործողության ժամկետը կարող է հետաձգվել պայմանավորվող կողմերի ցանկությամբ։



պայմանագրի գործողությունը հետաձգելու իր ցանկության մասին կողմերից մեկը գրավոր ձևով պետք է հայտնի մյուս կողմին՝ պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց մի ամիս առաջ. հակառակ կողմը ստանալով այդ տեղեկությունը պետք է նրան պատասխանի մի շաբաթվա ընթացքում։ Պատասխանի բացակայության դեպքում պայմանագիրը ամբողջ ծավալով պահպանում է իր ուժը մինչև նոր պայմանագիր կնքելու մոմենտը։

8. Պայմանագիրը կյանքի մեջ կիրառելու համար, նմանապես և ձեռնարկների ու հիմնարկների մեջ գործավորների և վարչության միջև ծագող վեճերի ու կոնֆլիկտների լուծման համար—ձեռնարկներում և հիմնարկներում կազմակերպվում են գնահատիչ-կոնֆլիկտային հանձնախմբեր, վորոնք պետք է գործեն սույն պայմանագրին կցած կանոնադրության հիման վրա։

## Բ. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՐՁԱԿՈՒՄ

9. Գործավորների ընդունելությունը կատարում է վարչությունը համաձայն ՓՀԺԿ-ի վորոշումների և Աշխատանքի Որենսգրքի հոդված 161, կետ «գ»-ի։

Առաջին հերթին բոլոր բաց պաշտոններում տեղավորում են միությունների անգործ անդամներին և միայն շրջանի սահմաններում Միության տվյալ վորակումի անգործ անդամների բացակայության դեպքում, Միության որգանների համաձայնությամբ կարող է թույլատրվել միության նաև վոչ-անդամների ընդունելություն։ Զորացրումի յենթարկվածները հավասարեցվում են միության անդամներին։

10. Գործավորների ընդունելությունը կատարում են՝

ա) փորակյալներին—Կապի Շրջանի Վարչությունը.

բ) կիսավորակյալներին—Շրջանների Վարչությանը անմիջապես յենթարկվող ձեռնարկներն ու հիմնարկները և

գ) վոչ-վորակյալներին—Կապի բոլոր ձեռնարկներն ու հիմնարկները—ինքնուրույն կերպով:

*Ծանոթ.*—Շտատի մեջ ընդունելը կատարվում է սահմանված փորձաքննությունից հետո:

11. Ձեռնարկության լիկվիդացիայի կամ աշխատանքների կրճատման հարցը վճռում է վարչությունը Միության մասնակցությամբ:

12. Գործավորների արձակումը կատարում են 10-րդ կետում մատնանշած մարմինները պահպանելով հետևյալ պայմանները.

ա) արտադրությունը կամ շտատները կրճատելիս, հավասար վորակման դեպքում, առաջին հերթին արձակվում են միության վոչ անդամները.

բ) շտատների կրճատման ժամանակ, ուրիշ հավասար պայմանների դեպքում, իրենց հովանու տակ անչափահաս յերեխաներ ունեցող միայնակ կանանց, տրվում է առավելություն նրանց գործի մեջ թողնելու մոքով.

գ) անհատական արձակումը ըստ աշխատանքի օրենսգրքի հոդվ. 47-ի կ. կ. ա և բ-ի, կատարվում է ԳԿՀ-ի վճռով, ըստ վորում այդպիսի դեպքերում բոլոր արձակվողներին տրվում է յերկշաբաթյա արձակման



նպաստ, անկախ այն բանից, թե արձակման մասին նրանց նախազգուշացում արվել է թե վոչ:

դ) ժամանակավոր աշխատանքներ կատարելու համար մի ամսից վոչ ավելի ժամկետով վարձվածները և վորոնց այդ մասին վարձելիս գրավոր կերպով նախազգուշացրել են, վարձի ժամկետը վերջանալուց հետո արձակվում են առանց վորևէ փոխհատուցման.

յե) արձակումը ըստ աշխատանքի օրենսգրքի հոդված 47 կ. գ-ի կարող է կատարվել միայն աշխատընդունակության ժամանակավոր կորստի մոմենտից 4 ամիս անցնելուց հետո: Հիվանդության ընթացքում աշխատավարձը տալիս են հասարակական ապահովագրական մարմինները, ընդհանուր հիմունքների համաձայն.

զ) գործավորը արձակված է համարվում արձակման ու գործից ազատվելու մասին հրամանը կամ կարգադրությունը նրան հայտարարելու օրից: Արձակվողին, մինչև արձակման օրը հասանելիք աշխատավարձը կամ փոխհատուցումը ձեռնարկության մեղքով չը վճարելու դեպքում անցկացրած օրերի համար, վճարվում է վարձատրություն՝ վորպես բանվորական օրերի համար, հաշվելով դրա մեջ և վերջնական հաշվատեսության օրը:

## Գ. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

13. Վարչությունը գործավորներին՝ նայած նրանց կատարած աշխատանքին, դասավորում է ըստ սակացույցի կարգերի, սույն պայմանագրին առընթեր վորակման ցանկի լիակատար համաձայնությամբ: Վորակման ցանկում վորևէ պաշտոնի բացակայության դեպքում՝ կարգը վորոշում է ԳԿՀ:

14. Գործավորների փոխադրությունը բարձր կարգից ցածրին կարող է կատարվել ԳԿՀ-ի վճռով միայն հետևյալ դեպքերում.

ա) սահմանված կարգին համապատասխան աշխատանքի անպետքությունը, յեթե այդ կը պարզվի աշխատանքի պրոցեսում գործավորի սկզբնական կարգի վորոշումից հետո.

բ) այն ժամանակ, յերբ բարձր կարգի համար համապատասխան աշխատանք չկա:

Ցածր կարգին փոխադրվել չհամաձայնվողը յերկշաբաթյա արձակման նպաստ ստանալով, կարող է արձակվել ընդհանուր հիմունքների համաձայն:

Փոխադրվելու ցանկություն արտահայտողը, փոխադրության որից սկսած յերկու շաբաթվա ընթացքում, աշխատավարձը ստանում է նախկին կարգով:

15. Ձեռնարկների պետերի և նրանց օգնականների պաշտոնանկությունը և կարգերի ստորացումը չի յենթարկվում ԳԿՀ-ի քննության, այլ կատարում են Շրջվարչությունները Կապի Շրջանային Վարչության հետ միասին:

16. Այն դեպքում, յերբ ցածր կարգի գործավորը 5 որից վոչ պակաս կատարում է բարձր կարգի գործավորի պարտականություններ, օրինակ՝ հիվանդության, արձակուրդի և այլ ժամանակ և միանգամայն հաջող կատարում է իր վրա դրած պարտականությունները, նրա վարձատրությունը կատարվում է բարձր կարգով: Պարտականությունների վոչ լիակատար հաջողությամբ կատարելու դեպքում կարգը վորոշում է ԳԿՀ:

17, Աշխատավարձի ֆոնդի բաշխումն Կապի Շըրջանների Վարչությունների միջև կատարում է ՓՀժԿ-ը Միության հետ միասին, վորոնք նույնպես և սահմանում են տեղերում այն օգտակործելու կարգը:

Շրջանների վարչությունները և Միության Շըրջանային վարչությունները, ի լրացումն գլխավոր սակագիր համաձայնությունների, կնքում են Շրջանի ձեռնարկությունների համար իրենց կարգադրության յենթակա աշխատավարձի ֆոնդի սահմաններում 1 կարգի կոպարի չափի մասին լրացուցիչ սակագիր համաձայնություններ:

Այլ սակագիր կարգերի գործավորների աշխատավարձի չափը վորոշվում է ներքև բերված 17 կարգանոց սակագիր կոպարների կոյեֆիցենտների համաձայն.

| Կարգ | Կոյեֆիցենտ | Կարգ | Կոյեֆիցենտ |
|---|---|---|---|
| 1 | 1 | 9 | 3,5 |
| 2 | 1,3 | 10 | 4,2 |
| 3 | 1,6 | 11 | 4,6 |
| 4 | 1,9 | 12 | 5 |
| 5 | 2,2 | 13 | 5,5 |
| 6 | 2,5 | 14 | 6 |
| 7 | 2,8 | 15 | 6,5 |
| 8 | 3,1 | 16 | 7 |
| | | 17 | 8 |

18. Աշխատավարձը տրվում է վճարման ամսի 18-ից վոչ ուշ:

*Ծանոթ.*— Վերև հիշված ժամկետին աշխատավարձը չվճարելու դեպքում, այդպիսին տրվում է տուգանքի հետ միասին, վորը վրա յե գալիս յուրաքանչյուր ուշացրած օրի համար չվճարված ամբողջ գումարի $^1/_4$ %-ի չափով:

19. Փոստային վագոններով, շոգենավերով և խճուղիներով փոստը տեղափոխող գործավորների, Փ. և ՀԺԿ-ի ձիու-փոստային կայարանների կառապանների, այլ և գծի պատահական վնասվածները վերացնելու գնացող տեխնիկների արտաժամյա ու ըստ գործի, նմանապես և օրական գործավորների հաշվետվությունը կատարվում ե վճարման հետևյալ ամսի 15-ից վոչ ուշ. հակառակ դեպքում վրա յե գալիս տուգանքը 18-րդ հոդվածի սահմանած չափով։

## ԳՈՐԾՀՂՈՒՄՆԵՐ (Командировки) ՅԵՎ ՏԵՂԱՓՈԽՈՒՄՆԵՐ.

20. Այն գործհղումների միջոցին, վորոնք կապված են քաղաքի սահմաններից 8 վերստից ավելի տարածություն գնալու և 8 ժամից ավելի տևող ժամանակի հետ՝ գործավորին, համաձայն Աշխատանքի Օրենսգրքի հոդ. 81-ի և ՍԽՀՄ Աշխ. Ժ. Կ.-ի 1923 թվի 28 օգոստոսի վորոշումների, տրվում են դրամական թոշակի (довольствие) բոլոր տեսակները. ըստ վորում՝ այն դեպքերում, յերբ գործհղումը կատարվում ե ցածր սակագիր գոտուց դեպի բարձրը, օրապահիկը վճարվում ե բարձր գոտով տվյալ գործավորի կոպարի հաշվի հիմամբ։

21. Այն ժամանակը, վորը գործադրվում ե գծի վնասվածները վերացնելու նպատակով եղած գործհղումների միջոցին՝ ձեռնարկությունից աշխատանքի վայրը գնալու և այնտեղից վերադառնալու համար, համարվում ե իբրև բանվորական ժամանակ։

Իսկ այն ժամանակը, վոր գործհղվողները գործադրում են գիշերելու համար, բանվորական ժամանակ



չի հաշվում, այլ վարձատրվում ե միայն օրապահիկով (суточными)։

22. Գործհղումների տևողությունը 3 ամսից ավելի չպետք ե լինի։ Գործհղման ժամկետի յերկարացնելը թույլատրվում ե միայն բացառիկ դեպքերում Միության մարմինների համաձայնությամբ։

23. Աշխատանքի նոր տեղերի փոխադրման կամ նշանակման դեպքում, տեղափոխվողին կամ նշանակվողին բացի ծախսերի վարձատրությունից, վորը նախատեսնված ե սույն պայմանագրի հոդվ. 20-ում, տրվում ե նույնպես տեղափոխության (подемные) նպաստ ամսական աշխատավարձի չափ, բարձր գոտով և բարձր կարգով (այն ժամանակ՝ յերբ տեղափոխումը կատարվում ե կարգի բարձրացումով). բայց կոպարի 9-րդ կարգից վոչ պակաս. իսկ նրա հետ գնացող ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար տեղափոխվողի կամ նշանակվողի աշխատավարձի 1/4 չափով, սակայն վոչ ցածր քան կոպարի 1-ի կարգը։

*Ծանոթ.*—Հաստատվում ե ՓՀԺԿ-ի հաշվին բագաժը տեղափոխելու հետևյալ չափը.—իրեն տեղափոխվողի կամ նշանակվողի համար 165 կիլոգրամ. իսկ նրա հետ տեղափոխվող ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար 85-ական կիլոգրամ։ Ընտանիքի տեղափոխելու ծախսերը նմանապես վարձատրում ե ՓՀԺԿ-ը անկախ այն բանից, թե ընտանիքը գնում ե գործհղվողի կամ տեղափոխվողի հետ միաժամանակ, թե մի քանի ժամանակից հետո։ Բագաժը տանելու ծախսերի մեջ մտնում ե.—դուրս գալու և ժամանելու վայրերում կառապանների վարձատրությունը և մարդատար արագության վարձատրությունը։

24. Տեղափոխվողները կամ նշանակվողները ծառայական պարտականություններից պետք է ազատվեն դուրս գալուց յերեք օր առաջ, նույնքան ժամանակ նրանք գործից ազատվում են աշխատանքի նոր վայրը գալուց հետո, իրենց անձնական գործերը կարգի բերելու համար։

Ծանոթ.—Այդ ազատ օրերի համար տրվում է հիմնական աշխատավարձը և օրապահիկը։

25. Այն դեպքում, յերբ միաժամանակ տեղափոխվում են աշխատանքի մեջ գտնվող ամուսինը և կինը, Թոշակի բոլոր տեսակները տրվում են յերկուսին, ի բաց առյալ ընտանիքի անդամներին տրվելիք նպաստը, վորը տրվում է նրանցից մեկին—այն է՝ ավելի բարձր աշխատավարձ ստացողին։

26. Փոստային վագոններով, շոգենավերով և խըճուղիներով փոստը տեղափոխող գործավորներին, ՓՀժԿ-ի ձիու-փոստային կայարանների կառապաններին, գծի վընասվածները վերացնելու գնացող տեխնիկներին, գործհղվողներին, պաշտոնի նշանակվողներին կամ տեղափոխվողներին՝ դրամական Թոշակի բոլոր տեսակները պետք է վճարվեն գործհղման որը կանխավճարով ըստ աշխատավայրի, նրանց հասանելիք գումարի 2/3-ի չափով։ Վերջնական հաշվետեսությունը կատարվում է գործհղումից վերադառնալուց հետո. իսկ տեղափոխվողների և նշանակվողների վերաբերմամբ—աշխատանքի նոր վայրում՝ մարշրուտը տալու մոմենտից վոչ ուշ՝ քան 7 օր։

Ծանոթ.—Յերկարատև գործհղումների ժամանակ օրապահիկների կանխավճարը տրվում է ամսական աշխատավարձի 2/3-ի չափով։



27. Աշակերտներից և անգործներից նոր նշանակվածներին, վորոնք մեկնելու յեն ուրիշ տեղ պաշտոնավարելու, տրվում է միայն օրապահիկը, ուղեգրումը և բագաժի տեղափոխման արժեքը—ընդհանուր հիմունքներով.

Պրակտիկանտները, վորոնք ձեռնարկության մեջ աշխատել են 3 ամսից վոչ պակաս, պաշտոնի նշանակվելու դեպքում մեկնելու համար, բավարարվում են Թոշակի բոլոր տեսակներով, համաձայն պայմանագրի հոդ. 23-ի։

## ՅԵ. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ

28. ՓՀԺԿ-ի ձեռնարկների և հիմնարկների բոլոր գործավորները ըստ բանվորական ժամանակի տևողականության՝ բաժանվում են հետևյալ խմբերի.

ա) 8 ժամյա բանվորական օրով,

բ) 7 ժամյա բանվորական օրով,

գ) օրական (СУТКИ) 4 անգամ փոխվող հերթապահությամբ,

դ) 6 ժամյա բանվորական օրով,

յե) չսահմանավորված բանվորական օրով,

զ) մասնատած բանվորական օրով։

29. Առաջի խմբին—8 ժամյա բանվորական օրով—վերաբերում են ՓՀԺԿ-ի ձեռնարկների և հիմնարկների այն է՝—փոստի, հեռագրի, ռադիո-հեռագրի, հեռախոսի, փոստի տեղափոխության, վերանորոգման, շինարարության, արհեստանոցներում և այլ բոլոր գործավորները, ի բաց առյալ հոդ. 20, 31 և 32-ում հիշատակածները։

30. Յերկրորդ խմբին— 7 ժամյա բանվորական օրով—վերաբերում են.

ա) Հեռագրատանը—այն հեռագրիչները, վորոնք մշտապես աշխատում են 16 ժամից վոչ ավելի գործող ապարատների վրա, (առանց գիշերային աշխատանքի)։

բ) Փոստում—կարգից դուրս, 1-ին և 2-րդ կարգի գրասենյակներում՝ հասարակ և պատվիրած թղթակցությունների դասավորողները (մշտական աշխատանքի դեպքում) և

գ) Վարչություններում—վարչությունների բոլոր աշխատակիցները (ՓՀԺԿ և Շրջվարչ)։

31. Հեռագրիչների համար, վորոնք աշխատում են խոշոր ձեռնարկություններում օր ու գիշեր գործող ապարատների վրա, սահմանվում է 4 անգամ փոխվող հերթապահություն գիշերային 4 ժամյա անընդհատ հանգստով և հեղափոխական տոներին աշխատելու համար հիմնական կոպարից դուրս մեկական չափով լրացուցիչ վարձատրությամբ։

Գիշերային աշխատանքը, շաբաթական հանգիստը և հանգստի բոլոր հատուկ օրերը (Աշխատանքի Օրենքների ժողովածուի հոդվ. 112) համարվում են փոխհատուցված 4 անգամյան փոխասփոխ հերթապահությամբ.

Ծանոթ. 1. Խոշոր ձեռնարկություններ՝ համարվում են կարգից դուրս, 1-ին, 2-րդ և 3-րդ կարգերի գրասենյակները։

2. Հեռագրիչները, վորոնք աշխատում են օր ու գիշերվա գործողություն ունեցող մնացած ձեռնարկություններում, վերաբերում են 7 ժամյա բանվորական օրին։

3. Հեռագրատանը փոխասփոխ աշխատողների ավագների, նրանց օգնականների, ղեկավարների, արագագործ ապարատների, վերահսկիչների, պատճեահան մեքենագրուհիների համար բանվո-



րական օրը սահմանվում է նույն տևողությամբ, ինչպես և տվյալ ձեռնարկության հեռագրիչների համար։

4. Հեռագրիչի պաշտոնը սահմանվում է տվյալ համակարգության ապարատի համար գոյություն ունեցող նորմայի $50^{0}/_{0}$-ից վոչ պակաս ծանրաբեռնման դեպքում։

32. Յերրորդ խմբին 6 ժամյա բանվորական օրով—վերաբերում են.

ա) ռադիո-հեռագրատան՝ ռադիո-հեռագրիչները։

Ծանոթ.—4-րդ և 5-րդ կարգերի կայարանների ռադիո-հեռագրիչների համար թույլատրվում է բանվորական օրի մասնատում. ռադիո-հեռագրիչների լողությամբ փաստացի միալար ընդունելությունը 4 ժամից ավելի չպետք է լինի. Մնացած ժամանակ նրանք կարող են հրավիրվել զբաղվելու թղթակցությունները վերամշակելու և գրասենյակում աշխատելու համար։

բ) Հեռախոսում—հեռախոսուհիները, վորոնք մշտական աշխատում են կենտրոնական կայարանների 100-ից ավելի աբոնենտ ունեցող կոմուտատորների վրա. միջքաղաքային, հանգուցային կայարաններում յերկու կամ ավելի շղթաներ լցված դեպքում և բանվորական օրում 30-ից վոչ պակաս միացումների ծանրաբեռնման պայմանում՝ ավագ մոլտիպլեն (կոչնամգիչ), վերահսկիչ, վերստուգիչ հեռախոսուհիները

գ) մշտական աշխատանքի ժամանակ ակկումուլյատորների վերանորոգությամբ և լարումով զբաղված բանվորները, հեռագրի և հեռախոսի կարելների զոդողները, վորոնք աշխատում են ընդհերկրյա ջրհորներում,

ձեռնոցպանները, վորոնք արձակ խողովակներից ձեռնոցներ են պատրաստում, ժապավենու արհեստանոցների բանվորները (բավականաչափ ազատության բացակայության դեպքում)։

33. Չորրորդ խմբին-չսահմանավորված (ненормированный) բանվորական որին վերաբերում են՝ վարչական- տեխնիկական անձնախմբի անձերը, վորոնց աշխատանքը չի ամփոփվում սովորական բանվորական որի շրջանակում և նմանապես այն գործավորները, վորոնց բանվորական որը փաստացի աշխատանքով չի լցվում—

ա) այն՝ գործավորները, վորոնք ստանում են անհատական կոպարներով կամ պատասխանատու աշխատավորների սակագնով (հավելումով ծանրաբեռնման համար).

բ) ամեն տեսակի կապի ձեռնարկությունների վարիչները (բացի առյալ ոժանդակիչ կետերի վարիչները).

գ) նրանց ոգնականները.

դ) կարգից դուրս և 1—2 կարգի գրասենյակների, հանգուցային և տրանսլյացիոն (թափարկու) ձեռնարկությունների և նմանապես հեռախոսական կայարանների կարգից դուրս և 1 կարգի—տեխնիկական մասերի կառավարիչները։

յե) կարգից դուրս, 1-ի և 2-րդ կարգի գրասենյակներում և կարգից դուրս հեռախոսական ցանցերում ինքնուրույն բաժինների վարիչները, յեթե նրանք շտատով հաստատված են։

զ) շրջամասերի (участковые) մեխանիկները և վերակացուները, վորոնք հատկապես նշանակված են թե

1903
12879



հեռախոսի և թե հեռագրի գծի ծառայության համար.

ե) պահպանության կոմենդանտները.

ը) շենքերի վերակացուները.

թ) ձիու փոստային կայարանների վարիչները։

34. Հինգերորդ խմբին—բանվորական մասնատած որով, վերաբերում են կապի այն գործավորները, վորոնց բանվորական որը մի քանի մասերի յե բաժանվում, և վավերացված և Աշխատանքի Որենսգրքի հոդված 97-ի ներքին իրակարգի (распорядок) կանոններով, ընդ այսմ՝ այն պայմանով, յեթե աշխատանքը կատարվում է ընդմիջումներով, վորի ժամանակ գործավորները կարող են բացակայել աշխատանքի վայրից. բայց գիշեր ժամանակ ընդմիջումներ չեն թույլատրվում։

Ընդմիջումները կարող են լինել ամեն տևողության, սակայն $1/2$ ժամից վոչ պակաս և որը յերկու ընդհատումներից վոչ ավելի, նրա մեջ հաշված և ճաշվա ընդմիջումը։

Նույն խմբին վերաբերում են հետևյալ գործավորները.

ա) փոստի փոխանակողները.

բ) հեռագրատանը փորձեր կատարողները.

գ) փոստը ընդունող, մշակող և առաքողները.

դ) փոստարկղներ պարպողները.

յե) միջքաղաքային կայարանների հեռախոսչուհիները, յեթե այդ կայարանների աշխատանքները կատարվում են ընդմիջումներով համաձայն ժամկարգի (расписание)։

Ծանոթ.—1. Թղթակցությունները տները տանող գործավորների և փոստում թղթակիցների հետ

յերեկոյան գործառնություն կատարող գործավորի համար՝ ճաշվա ընդմիջումը կարելի յե յերկարացնել մինչև 4 ժամ։

2. Յերկու ընդմիջումների տևողությունը, վորը սահմանված է հեռախոսչուհիների համար (տես կետ յե.), 4 ժամից ավել չպետք է լինի։

3. Այն ձեռնարկություններում, վորտեղ միևնույն վորակումի մի քանի աշխատակիցներ կան, վորոնց համար սահմանված է մասնատած բանվորական որ, գիշերային աշխատանքների համար՝ բոլոր այդ գործավորներին հերթով գործի կանչել։ Ներքին իրակարգի կանոններում այդ հերթապահությունը պետք է հիշատակած լինի։

35. Տվյալ անձի նկատմամբ, նրա պաշտոնի համաձայն վորոշված բանվորական որը լցնելու համար, բավարար չափով գործ չլինելու դեպքում, վարչությունը վորոշված բանվորական որի սահմաններում, աշխատանքի խտացման տեսակետով՝ այդ նույն անձի վրա կարող է դնել սակագիր բնույթ չկրող պարտականություններ. սակայն պարտականությունների այսպիսի դասավորումը աշխատանքի վարձատրության նկատմամբ զուգավարություն չի համարվում և այդ անձը պահպանում է աշխատավարձը համաձայն իր բարձրագույն մշտական պաշտոնի, առանց վորևե վերավճարումների։

Բանվորական որի հիշյալ խտացումը թույլատրվում է.

ա) բոլոր մասնագիտությունների վորակյալ գործավորների համար, դրա մեջ հաշված և տեխնիկական պերսոնալը, վորը աշխատում է հեռագրի և փոստային թղթակցությունների վերամշակմամբ, փոստերի փոխանակությամբ, հեռախոսական կապի և գրասենյակների ու նմանապես պատահական միավածները կարգի բերելու սպասարկությամբ.



բ) փոստ - հեռագրական և փոստային բաժանմունքների վարիչների և այդ բաժանմունքների վորակյալ գործավորների համար, վորոնք զբաղված են թղթակցությունները տեղ հասցնելով, փոստը ուղեկցելով, յեթ փոստերի թիվը շաբաթական 3-ից ավելի չէ, նրա պահպանությամբ, շենքերը հարդարելով (уборка) ու տաքացնելով.

գ) մինչև 4-րդ կարգի, դա էլ մեջը հաշված, մանր ձեռնարկություններում՝ վորակյալ և կիսավորակյալ գործավորների համար, բացի «ա» և «բ» կետերում հիշվածներից, նմանապես և հետևյալների համար.

1) Վորակյալ փոստային գործավորների համար, վորոնք զբաղված են փոստային արկղները դատարկելով, թղթակցություններին կնքոցներ խփելով, փոստային կապոցներ քաշելով, նրանք ամբարը տանելով, փոստային իրերը կապելով ու քանդելով.

2). Ձեռնարկությունների պահպանության հերթապահների համար։

3) Վորակյալ գործավորների և հեռագրիչների համար, վորոնք զբաղված են թղթակցությունները տեղ հասցնելով, յեթե չկա կիսավորակյալ կամ վոչ վորակյալ գործավոր։

4) Կիսավորակյալների համար, վորոնք զբաղված են վոչ վորակյալ գործավորների աշխատանքներով։

Ծանոթ.—1. Սույն հոդվածում հիշատակված արհեստները համարել որինակելի. առանձին գործավորներին կոնկրետ կերպով խտացրած

բանվորական օրին վերաբերելը և նրանց վարձատրելու կարգը՝ կիրառվում է ԳԿՀ-ի վորոշումներով կամ նախատեսնվում է ներքին իրակարգի կանոններով:

2. Սույն հոդվածում հիշատակած գործավորների համար, բանվորական օրի խտացումն թույլատրվում է միայն այն պայմանով, վոր աշխատանքի ընդհանուր տևողությունը օրվա ընթացքում չպետք է բարձրանա տվյալ խմբի (գրուպպա) նորմալ բանվորական օրի տևողությունից, այսինքն՝ 8 ժամից:

36. Հաստատվում է բանվորական ժամանակի հաշվառության հետևյալ սիստեմը—

ա) ամսական և

բ) օրական:

37. Բանվորական ժամանակի ամսական հաշվառությունը կիրառվում է կապի գործավորների նկատմամբ, վորոնք փոխ առ փոխ աշխատանք են կատարում, նմանապես և փոստի փոխադրության մեջ: Աշխատանքի մնացած բոլոր տեսակների բանվորական ժամանակը հաշվառվում է օրով:

38. Այն գործավորների համար, վորոնց աշխատանքը հաշվի յե առնվում ամսով, բանվորական ժամերի նորմալ քանակը ամիսը կազմում է.—

8 ժամյա աշխատանքի համար—184 ժ.,

7 ժամյա աշխատանքի համար—164 ժ..

4 հերթապահությամբ աշխատող գործավորների համար—152 ժ. և

6 ժամյա աշխատանք կատարող գործավորների համար—144 ժամ:

39. Չսահմանավորված (ненормированный) բանվորական օրով գործավորների աշխատանքը ժամի հաշվով չի հաշվի առնվում:



40. Շրջիկ գործավորների բանվորական ժամերի ընթացքում՝ այն բոլոր ժամանակը, վորը նա անց է կացնում ճանապարհին՝ հաշվի յե առնվում, ի բաց առյալ փոստի հանձնելու րոպեյից մինչև նոր կարգագիր (наряд) ստանալու ժամանակամիջոցը (յեթե կանգառման միջոցին վոչ մի գործառնություն չի կատարվել) և ամենօրյա 8 ժամյա հանգիստը, վորը տըրվում է յուրաքանչյուր գործավորի՝ նրա ճանապարհին յեղած միջոցին և վորը բանվորական ժամանակ չի հաշվում, այլ վարձատրվում է միայն օրապահիկով:

41. Չսահմանավորված բանվորական օր ունեցող անձերը ստանում են հետևյալ փոխհատուցումն (компенсация)·

ա) այն անձերի համար, վորոնք աշխատավարձը ստանում են պատասխանատու գործավորների կոպարներով, սահմանվում է վորպես վորոշ տոկոս կոպարի նկատմամբ—հավելումն ծանրաբեռնման համար (համաձայն պատասխանատու գործավորների սակացույցի)·

բ) Մնացած բոլոր չսահմանավորված բանվորական օրով բանվորները և պաշտոնյաները ստանում են փոխհատուցումն կոպարի մինչև 50%-ի հավելման չափով, ի բաց առյալ անհատական ռոճիկ (персональный оклад) ստացող անձերը, վորոնք վոչ մի լրացուցիչ վարձատրություն չեն ստանում չսահմանավորված աշխատանքի համար:

Ծանոթ.—Փոխհատուցման չափը չսահմանավորված աշխատանք ունեցող անձերի համար՝ սահմանվում է Շրջվարչության համաձայնությամբ

միության շրջանային վարչության հետ՝ նայած աշխատանքի քանակին, համաձայն ՓՀԺԿ-ի և Կապի ԿԿ-ի ցուցմունքների։

42. Համասահմանված հանգստի օրերին (կիրակի կամ շաբաթվա այլ օրեր) կատարած աշխատանքը, նմանապես և աշխատանքի Օրենսգրքի հոդվ. 111 և 112-ում հիշատակված օրերինը—

ա) անհատական կոպարով և նմանապես պատասխանատու գործավորների սակացույցով ստացող անձերին չի վարձատրվում.

բ) փոխ առ փոխ աշխատողներին նույնպես չի վարձատրվում, ի բաց առյալ այն աշխատանքները, վորոնք կատարվում ե մարտի 12-ի, մայիսի 1-ի և նոյեմբերի 7-ի օրերը, յերբ սահմանված նորմայի մեջ մտնող աշխատանքը (144, 164, 184 ժամ.) վարձատրըվում ե նաև մի լրացուցիչ կոպարով. իսկ նորմայից դուրս—յերկու լրացուցիչ կոպարներով.

գ) չսահմանավորված բանվորական օրի ամենորյա բանվորական ժամանակի հաշվառությամբ կարող ե մետակ չափով փոխհատուցվել հանգստով՝ շաբաթվա այլ օրերում, վորը վոչ պակաս քան մի ամիս առաջ ճիշտ կերպով պիտի վորոշված լինի ներքին իրակարգի կանոններով։

43. Այն գործավորների արտաժամյա աշխատանքը, վոր ամեն որ հաշվի յե առնվում, վարձատրության փոխարեն կարող ե փոխհատուցվել մետակ չափի հանգստով հենց նույն շաբաթվա ընթացքում. հակառակ դեպքում՝ վարձատրվում ե ընդհ. հիմունքներով։

Այն գործավորների արտաժամյա աշխատանքը, վորը հաշվի յե առնվում ամսե-ամիս, վարձատրվում ե ընդհանուր հիմունքներով։



44. Փոխառփոխ աշխատանքի անընդհատ տևողությունը չի կարող 6 ժամից պակաս լինել և 12 ժամից ավելի։

Գիշերային աշխատանքի ժամանակը չի կարող մասնատվել յերկու հերթափոխության միջև։

Փոխառփոխ աշխատանքի գործավորներին գիշերային հերթապահության (ночное дежурство) ընթացքում պետք ե տալ 4 ժամյա անընդհատ՝ անպայման հանգիստ, վորը բանվորական ժամանակի մեջ չի մտնում և չի ել վարձատրվում։

Լրացուցիչ (ցերեկվա) հերթափոխները, ինչպես նաև մինչև կես գիշեր շարունակվող գործողություն ունեցող ձեռնարկությունների գործավորները աշխատանքից պետք ե ազատվեն 24-րդ ժամից վոչ ուշ։

45. Հեռագրի և հեռախոսի գծի պատահական վնասվածքները կարգի բերելու կամ յերկաթուղով, շոգենավով և խճուղիներով փոստին ուղեկցելու հետ կապված գործուղումներից, այլ և ծառայության գործերով 12 ժամից վոչ պակաս տևող գործուղումներից վերադարձողները, չեն կարող աշխատանքի կանչվել, գալու մոմենտից 24 ժամը լրանալուց առաջ։

Բացառիկ դեպքերում, վերակացուների և մոնտյորների նկատմամբ՝ թույլատրվում ե գործուղումն 24 ժամյա ընդմիջումից առաջ, յեթե գծի նոր վնասված դեպքում՝ անհնարին կը լինի նրա փոխարինումը ուրիշ գործավորով։

46. Արտաժամյա աշխատանքները թույլատրվում են միայն բացառիկ դեպքերում—

ա) աշխատանքի Օրենքների ժողովածուի հոդված 104-ի կարգով.

բ) գոյություն ունեցող և նոր կառուցվող հեռագրի և հեռախոսի գծերի ու կայարանների վերանորոգման համար շտապ աշխատանքներ կատարելու դեպքում.

գ) փոստային վագոններով, շոգենավերով և խճուղիներով փոստը փոխադրելու ժամանակ:

47. Գիշերային աշխատանքը (22 ժ. մինչև 6 ժամ) ի բաց առյալ հոդված 31 հիշատակածը, վարձատրվում է Աշխատանքի Օրենսգրքի հոդված 96-ի համաձայն:

## Զ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

48. Այն արհեստների գործավորներին, վորոնք թվված են պայմանագրին կցած ցանկում, սահմանված ժամկետին տրվում է ըստ ցուցակում հիշատակած նորմայի՝ լավորակի սպեց հագուստ, նախապաշտպանողական հարմարություններ և չեզոքացնող կերակուր: Այդ արհեստների անվանական ցանկերը կազմում է վարչությունը միության հետ միասին:

Այն դեպքում՝ յերբ սահմանված ժամկետին սպեցհագուստ չի տրվում, գործավորը իրավունք ունի այդպիսին ձեռք բերել իր միջոցներով և ՓՀԺԿ-ը պետք է մի շաբաթվա ընթացքում հաշվի ներկայացնելու րոպեյից, տա սպեց-հագուստի շուկայի արժեքը: Արժեքի մասին տարաձայնություն առաջ գալու դեպքում՝ հարցը վճռում է ԳԿՀ:

Ծանոթ.—Աշակերտներն ու պրակտիկանտները, վորոնք աշխատում են ձեռնարկություններում և արհեստանոցներում, ստանում են հենց նույն արհեստի հասակավորների հետ՝ համահավասար սպեց հագուստ:



49. Այն արհեստների գործավորներին, վորոնք հիշատակված են պայմանագրին կցած ցանկում վերապահվում է յերկշաբաթյա լրացուցիչ արձակուրդ:

Ծանոթ.—Հերթական արձակուրդ գնացողներին՝ աշխատավարձը տրվում է կանխավճար.— 2 շաբաթյա արձակուրդի դեպքում՝ յերկշաբաթյա կանխավճարը, իսկ 4 շաբաթյա արձակուրդի դեպքում—լրիվ ամսականի կանխավճարը: Հաշվետվությունը կատարվում է ընդհանուր հիմունքներով: Կանխավճար չստանալու դեպքում և նմանապես ԳԿՀ-ի վորոշմամբ արձակուրդի հերթի փոփոխության դեպքում, գործավորը իրավունք ունի արձակուրդից հրաժարվելու և սահմանված փոխհատուցումն ստանալու՝ տարվա վերջում:

50. Այն դեպքերում, յերբ հերթական արձակուրդը ձեռնարկության մեղքով ոգտագործված չի յեղել, գործավորին տրվում է փոխհատուցում հիմնական կոպարից դուրս մեկ ու կեսի չափով:

51. Մոսկվայի, Լենինգրադի, Խարկովի հիմնարկների և ձեռնարկների (մինչև 11-րդ կարգը, դա էլ մեջը հաշված) գործավորներին, վորոնք ապրում են աշխատանքի վայրից 3 վերստ հեռավորության վրա, ՓՀԺԿ վարձատրում է յերկաթուղով և տրամվայով աշխատանքի գնալու և վերադառնալու վարձը. սակայն տրամվայով առաջին յերեք վերստի գնալը չի վարձատրվում, իսկ յերկաթուղիով գնալը վարձատրվում է մինչև 30 վերստ:

52. Ծառայական պարտականությունները կատարելու դեպքում, դժբախտ պատահարներից մեռած գործավորների ընտանիքներին տրվում է միանվագ

նպաստ մահացածի 3 ամսի աշխատավարձի չափով, սակայն վոչ պակաս 9-րդ կարգի կոպարից։

Բացի դրանից, մինչև դատարանի վճռի կայացնելը, մահացածի ընտանիքին տրվում է սոցիալական ապահովագրական գանձարկղից ստացած նպաստի և մահացածի աշխատավարձի տարբերությունը։

53. Այն ձեռնարկներում, վորտեղ աշխատանքի պայմանների համաձայն կան գիշերային հերթապահություններ, պետք է հանգստի համար հատկացնել շինություն, անհրաժեշտ քանակությամբ մահճակալներով, ներքնակներով և անկողնու սպիտակեղենով կամ թախտերով (кушетка)։

Փոստային վագոններում և շոգենավերում քնելու տեղերը հայթայթվում են սպիտակեղեններով՝ բրիգադայի գործավորների թվի համաձայն։

Վերջնական կետերում, վորտեղ փոստի փոխադրության գործավորների կայանը 12 ժամից ավելի յե շարունակվում, հանգստի սենյակները պիտի կահավորվեն։

Փոստային վագոնները, շոգենավերում-փոստային կայուտները և ՓՀժԿ-ի տեխնիկական արհեստանոցները պետք է հայթայթվեն անհրաժեշտ դեղորայքով։

54. Բացառիկ դեպքերում, թույլատրվում է փոստը ձեռքով կայարան տանել, ըստ վորում՝ այդ ձեռով տանելու ամենաշատ տարածությունը վորոշվում է 2 կիլոմետր. իսկ ամենաշատ քաշը—15 կիլոգրամ։

Փոստատարի բոլոր պայուսակները, թղթակցությունները—15 կիլոգրամից ավելի չպետքե լինեն։

Վերակացուները և մոնտյորները, վորոնք գնում են գծի վնասվածները կարգի բերելու, իրավունք ունեն ՓՀժԿ-ի հաշվին բանվոր վարձելու կամ օգտվելու հասարակական փոխադրության միջոցներով, յեթե պայուսակի քաշը գործիքներով և նյութերով 15 կիլոգրամից ավելի յե։



Նամակատարները գործառնության մի օրում 6 ժամից ավելի նամակներ չպիտի ցրեն. մնացած ժամանակը նրանք պիտի աշխատեն ձեռնարկի մեջ։

55. Կապի հիվանդ գործավորների սանիտար-կուրորտային կարիքներին բավարարություն տալու նպատակով, ՓՀժԿ-ը պահում է 450 սանիտար-կուրորտային մահճակալներ՝ բուժման 6 շաբաթյա կուրսով, լրիվ պանսիոնով և պրոցեդուրաններով։ Մինչև ներփակ 8-րդ կարգը գործավորներին սանատորյա գնալու և հետ դառնալու ճանապարհածախսը տրվում է ՓՀժԿ-ի հաշվին։

Ծանոթ. 1.—Պետք է վճարվի. յերկաթուղու մարդատար տոմսակի և պլացկարտի արժեքը (կոշտ տեղ), իսկ շոգենավում-յերկրորդ կարգի մարդատար տոմսակի արժեքը։

2. Սանատորյա գնալու և հետ վերադառնալու համար գործադրած անհրաժեշտ ժամանակը 6 շաբաթյա բուժման ժամկետի մեջ չի մտնում։

56. Ապահովագրական գանձարկղ չունեցող վայրերում գտնվող ՓՀժԿ-ի հիմնարկների և ձեռնարկների գործավորները, ստանում են իրենց աշխատանքի վայրի հիմնարկներից և ձեռնարկներից ժամանակավոր վոչ աշխատունակության համար սոցիալ-ապահովագրական նպաստ՝ իր լրացուցիչ տեսակներով։

Վարչությունը այդ նպաստները տալու ընդունակ ձեռնարկների և հիմնարկների ցուցակը համաձայնեցնում է տեղական ապահովագրական մարմինների հետ։

## Ը. ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ

57. ՓՀԺԿ-ը աշակերտների քանակը ձեռնարկների մեջ վորոշում է գործավորների ընդհանուր թվի համաձայն $2^0/_0$-ի չափով։

*Ծանոթ.*—Շտատների կրճատման դեպքում աշակերտների և աշխատողների մեջ սահմանված հարաբերությունը փոփոխության չի յենթարկվում.

58. Աշակերտելու ժամկետը վորոշվում է ուսումնասիրվող արհեստի բարդությամբ և նրանով՝ թե ինչպես է դրված ուսուցումը. բայց համենայն դեպս չի կարող 6 ամսից ավելի պակաս լինել ձեռնարկներում սովորողների համար. կապի դասընթացներում և ուսումնարաններում սովորողների համար՝ ըստ գլխարհկրթի հաստատած ուսումնական ծրագրի. իսկ հեռախոսաչուհիների համար չի կարող 1 ամսից պակաս լինել։

*Ծանոթ.*—Ուսումնարանների և դասընթացների քանակը, աշակերտների ընդունելության և ուսման կարգը սահմանում է ՓՀԺԿ-ը՝ Միության հետ միասին։

59. Ուսման ամբողջ ժամկետի ընթացքում աշակերտները վարձատրվում են 1 կարգի սակացույցի կոպարով։ Քննությունը տալուց հետո աշակերտները աշխատավարձ ստանում են կատարած գործի համաձայն. ըստ վորում՝ յուրաքանչյուր առանձին դեպքում կարգը վորոշում է ԳԿՀ։

*Ծանոթ.*—1 Քաղաքի սահմաններից դուրս գնալու հետ կապված աշխատանքներ կատարելու դեպքում՝ աշակերտները ստանում են գործուղման թոշակը ընդհանուր հիմունքներով։



2. Աշակերտների փորձաքննությունը հիմնարկություններում պետք է նշանակվի վոչ ուշ քան ուսումը սկսելու մոմենտից 6 ամիս անց։

3. Հիմնարկներում աշակերտների վարձատրությունը կատարվում է աշխատավարձի ֆոնդից. իսկ բարձրագույն դպրոցներում, տեխնիկումներում, Կապի դպրոցներում ու դասընթացներում—արհտեխնիկական կրթության ֆոնդի հաշվին։

60. Կուլտուր-կրթական կարիքների համար, ՓՀԺԿ-ը ամեն ամիս մտցնում է Կապի Կ. Կ.-ն 25,000 ռուբլի։

61. Բանվորակ. կոմիտեներին և միության լիազորներին պահելու համար՝ ՓՀԺԿ-ը յուրաքանչյուր ամիս Միության Շրջանային Վարչություններին բաց է թողնում նախահաշվի համաձայն հիմնական աշխատավարձի ծախսերի ընդհանուր գումարի $1^1/_2{}^0/_0$։

62. Բանկոմի առաջարկությամբ այն ձեռնարկներում ու հիմնարկներում, վորոնց շտատը 15-ից մինչև 50 մարդ է, բանկոմի անդամներից մեկը ազատվում է ծառայական պարտականություններ կրելուց շաբաթը մի օր արհաշխատանքների համար. 50-ից մինչև 100 մարդ շտատ ունեցողինը—շաբաթը յերկու օր։

Նրանց վարձատրությունը աշխատանքից ազատված ժամանակ կատարվում է բանկոմին պահելու համար բաց թողնված միջոցներից։

63. Բանկոմներ պահելու համար միջոցները բաց են թողնվում վճարման ամսի 18-ից վոչ ուշ, իսկ միության կուլտուր-կրթական կարիքների համար—վճարման ամսից հետո՝ հետևյալ ամսի 1-ից վոչ ուշ։

64. Արհեստակցական կազմակերպությունների մեջ վոչ ընտրական պաշտոններում աշխատող ընտր-

*ված արհգործավորներին, վորպես նաև պատասխանատու արհգործավորներին, այլ և արհկազմակերպությունների կողմից՝ խորհրդային, կուսակցական և այլ օրգաններում աշխատելու համար գործհղված գործավորներին, լիազորության ժամկետը լրանալուց հետո, —աշխատանք է տրվում նրանց պաշտոնատեղի նախկին հիմնարկներում ու ձեռնարկներում, համաձայն վերադարձած գործավորի վորակավորման:*

*1924 թիվ, 23 դեկտեմբերի.*

*Փոստի և Հեռագրի ժողովրդական Կոմիսար՝*
*Սմիրնով*

*Ի. տ. Ս. Խ. Հ. Մ. Կապի գործավորների Միության Կենտրոնական Կոմիտեյի նախագահ՝*
*Մանցևլոդո*

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ,

**ՎՈՐ ԿՆՔԵԼ Է ԿԱՊԻ Կ. Կ.-Ն Փ. Հ. Ժ. Կ.-Ի ՀԵՏ**

**1924 թ. դեկտեմբերի 23-ին.**

ՀԱՎԵԼՎԱԾ I

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԳՆԱՀԱՏԻՉ-ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

### Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ.

1. ԳԿՀ կազմակերպվում է ՓՀԺԿ-ի ձեռնարկներում հետևյալ նպատակով.—

ա) կիրառել կյանքի մեջ հավաքական պայմանագրից և սակագիր համաձայնություններից բղխող բոլոր սկզբունքները.

բ) Լուծել գործավորների և վարչության միջև ծագող վեճերն ու ընդհարումները։

### Բ. ԳԿՀ-Ի ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ.

2. Հավաքական պայմանագրի և սակագիր համաձայնությունների կիրառման նկատմամբ՝ ԳԿՀ-ի ֆունկցիաներին վերաբերում են—

ա) արձակուրդների հերթապահության կարգի սահմանավորումը.

բ) արտադրողական նորմաների և առանձին գործերի գնահատությունների քննելն ու հաստատելը, յեթե այդպիսիք կցված չեն պայմանագրին.



գ) ՓՀԺԿ-ի և Միության ԿԿ-ի կողմից սահմանվող մշակույթի նորմաների հիման՝ շտատների նախագծերի մշակումը.

դ) աշխատանքային պայմանագրի խախտումն՝ Աշխատանքի Օրենսգրքի հոդվ. 47-ի կետեր Գ և Դ նախատեսված դեպքերում.

յե) մասնավոր գործավորներից կամ բանկոմներից, տեղկոմներից և լիազորներից ստացված դիմումների քննությունը, ինչպես ընդհանուր, այնպես և առանձին անձերի աշխատավարձի սխալ հաշվետեսությունը ստուգելու մասին և սխալ կատարած արհեստակցական փորձերի ու փորձաքննությունների, վարչական կարգով ճիշտ կերպով չսահմանված պատիժների ստուգման մասին։

3. ԳԿՀ-ի ընդհարումային ֆունկցիաներին վերաբերում են.

ա) վիճելի հարցերի լուծումը, վորոնք կապ ունեն վարձի կարգի խախտման, տեղափոխության, պաշտոնանկության և բանվորական ույժի արձակման հետ.

բ) հավաքական պայմանագրի կիրառման և մեկնաբանության հողի վրա առաջացած ընդհարումների, նաև աշխատանքային պայմանագրերին վերաբերյալ ընդհարումների լուծումն։

Ծանոթ.—ԳԿՀ-ի ձեռնհասության յենթակա չեն.

ա) հավաքական պայմանագրի եյությունը հակառակ վեճեր, նրա առանձին մասերը վերացնելու պահանջներ, այլ և պահանջներ՝ հավաքական պայմանագրի կամ սակագիր համաձայնության մեջ մտցնելու նոր կամ լրացուցիչ պայմաններ.

բ) և աշխատանքի ու հասարակական ապահովագրության օրենքների խախտման հողի վրա առաջացած գործեր։

4. ԳԿՀ-ի ֆունկցիաներին վերաբերում են նաև հավաքական պայմանագրին առընթեր ներքին իրակարգի կանոնների ռեալիզացիան։

## Գ. ԳԿՀ-Ի ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

5. ԳԿՀ կազմակերպվում է ՓՀժԿ-ի ձեռնարկներում և հիմնարկներում, վորոնց շտատը 7 հոգուց պակաս չէ։ ԳԿՀ-ի կազմի մեջ մտնում են՝ յերկու ներկայացուցիչ Միության կողմից և յերկուսը—վարչության։

Ծանոթ.—1. Այն ձեռնարկներում կամ հիմնարկներում, վորտեղ գործավորների թիվը 7 հոգուց պակաս է, ԳԿՀ չի ստեղծվում. նրանց մեջ գնահատիչ կոնֆլիկտային աշխատանքը վարում են շրջանային գրասենյակների ԳԿՀ-ները։

2. Շատ համքյարություններ կամ բաժանմունքներ ունեցող խոշոր ձեռնարկներում, կարելի յե պարիտետի սկզբունքը պահպանելով կազմակերպել համքյարական ԳԿՀ-ներ, նախապես քննության յենթարկելու համար աշխատանքների և պաշտոնների ըստ կարգերի բաժանումը և նորմաների ստուգումը ու առանձին գործերի գնահատությունը։ Այդ հանձնաժողովների ամբողջ աշխատանքը քննում և հաստատում է տեղական ԳԿՀ։

3. Այն ձեռնարկներում կամ հիմնարկներում, վորտեղ գործավորների թիվը 50 հոգուց պակաս է, ԳԿՀ-ի անդամի պարտականությունները գործավորների կողմից՝ կատարում է Միության նրանց լիազորը։

6. Կողմերն ընտրում են յուրաքանչյուր կողմից մեկական նախագահ և մեկական քարտուղար։ ԳԿՀ-ի նիստերում նախագահի և քարտուղարի պարտականու-



թյունները՝ կողմերի ներկայացուցիչները կատարում են հերթով, ըստ վորում՝ միևնույն նիստում նախագահի և քարտուղարի պարտականությունները չեն կարող կատարվել միայն մի կողմի ներկայացուցիչների կողմից։

7. ԳԿՀ-ի նիստերը կատարվում են դռնբաց։ Փակ նիստեր կարող են տեղի ունենալ յուրաքանչյուր առանձին դեպքում՝ հանձնաժողովի վորոշումով։

Ծանոթ.—ԳԿՀ-ի կողմերը իրավունք ունին իրենց նիստերին հրավիրել փորձագետներ և գիտակ անձեր, չնայած վոր այդպիսիները աշխատելիս ել չլինեն տվյալ հիմնարկի մեջ։ Հրավիրված անձերը օգտվում են խորհրդակցական ձայնով։

## Դ. ԳԿՀ-Ի ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԳԸ

8. ԳԿՀ մտնող բոլոր հարցերը քննության են առնվում ԳԿՀ-ի նիստերում։ Վորոշումները նախագահի և քարտուղարի ստորագրությամբ մտցնում են արձանագրության մեջ և 2 օրից վոչ ուշ հայտարարում գործավորներին։

9. ԳԿՀ-ի նիստերը տեղի են ունենում շաբաթը մի անգամից վոչ սակավ, ըստ վորում ընդհարումային բնույթ կրող գործերի քննության՝ ձեռնամուխ պիտի լինեն դիմումի ԳԿՀ մտած մոմենտից 24 ժամ վոչ ուշ։

10. ԳԿՀ, սույն կանոնադրության 2-րդ հոդվածում հիշատակած հարցերը, յերկու կողմերի անդամների ամեն քանակության դեպքում՝ վճռում է ձայների հասարակ մեծամասնությամբ։

Ծանոթ.—Ձայների մեծամասնությամբ վճռըված հարցերը, կարող է Միության օրգանը կամ վարչությունը 24 ժամվա ընթացքում դնել ԳԿՀ-ի յերկրորդ քննությանը, վորոնք և վճռվում են վոչ թե քվեարկությամբ, այլ կողմերի համաձայնությամբ։

11. 3-րդ և 4-րդ հոդվածներում մատնանշած հարցերը վճռվում են բացառապես կողմերի համաձայնությամբ։

12. Այն հարցերը, վորոնց վերաբերմամբ ԳԿՀ-ի վճիռները չեն կայացել, ընդունում են կոնֆլիկտային դրություն, վորոնք Միության միջոցով ուղարկվում են աշխատանքի տեղական բաժնում լուծելու համար, ի բաց առյալ աշխատավարձի անժամանակ տալու, սպեցհագուստի, շտատների և մշակման նորմաների փոփոխության, գործավորների ըստ կարգերի բաշխման հարցերը, վորոնք հանձնվում են Շրջկապի վարչությանը՝ Շրջանի վարչության հետ համաձայնեցնելու համար կամ նրան լուծելու նահանգական աշխատանքային բաժինների միջոցով. իսկ շտատների վերաբերմամբ՝ ՓՀԺԿ-ին և Միության ԿԿ-ին—լուծելու համար։

13. ԳԿՀ-ի վճիռները, վորոնք ընդունված են կողմերի համաձայնությամբ՝ վերջնական են ու պարտադիր յերկու կողմերի համար և յենթակա չեն նոր գանգատի։

Ծանոթ.—ԳԿՀ-ի հանած վճիռների մասին, վորոնք հակասում են օրենքին, Աշխժողկոմի մարմինները գրավոր ձևով օրենքների խախտման և շարժառիթների հիշատակությամբ՝ տեղեկացնում են ԳԿՀ-ին՝ առաջարկելով վերաքննելու իր վճիռը։

14. Յեթե ԳԿՀ-ում ընդհարումների քննության ժամանակ՝ յերևան գան քրեական արարքի նշաններ, այդ դեպքում քրեական գործը անմիջապես պետք ե անջատել և ուղարկել Ժողովրդական դատարան։

15. ԳԿՀ-ի անդամների աշխատանքը կատարվում ե բանվորական ժամերին։

Փ և ՀԺԿ Մուսատով

23 դեկտ. 1924 թ. Կապի ԿԿ Մանցևվոդս



Հավելված II

# ՆԵՐՔԻՆ ԻՐԱԿԱՐԳԻ (РАСПОРЯДОК) ՈՒՂԵՑՈՒՅՑ ԿԱՆՈՆՆԵՐ.

## Ա. ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

1. Փոստում — թղթակցությունների ընդունումն, տալը և մշակումը։

2. Հեռագրատանը—թղթակցությունների ընդունումն, տեղ հասցնելը և մշակումը։

3. Ռադիոյում թղթակցությունների ընդունումն, տեղ հասցնելը և մշակումը։

4. Հեռախոսում—հիմնարկություններին և աբոնենտներին սպասարկելը։

## Բ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱԼՈՒ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ՀԵՌԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ.

5. Ձեռնարկներում բոլոր աշխատողները պարտավոր են աշխատանքի սկզբին լինել իրենց տեղերում։

6. Վարչությունը բացառիկ դեպքերում, աշխատանքի ազատ ժամերին՝ իրավունք ունի գործավորներին աշխատանքի կանչելու։

7. Գործավորները, վորոնք չեն յեկել ձեռնարկը կամ հիմնարկը աշխատանքի սկզբի վորոշված ժամին, համարվում են ուշացած. ըստ վորում՝ մինչև 1 ժամ

ուշացողները, համարվում են որի 1/4 բաց թողածներ, մինչև 2 ժամ ուշացողները համարվում են կես օրը բաց թողածներ. իսկ 2 ժամից ավելի ուշացողները համարվում են բոլորովին բացակայողներ։

8. Գործավորները, վորոնք անակընկալ հիվանդությունների շնորհիվ, հնարավորություն չունեն գործի գնալու, պարտավոր են յերեք օրվա ժամկետում այդ մասին տեղեկացնել վարչությանը և իրենց աշխատանքի չգնալը արդարացնող փաստաթղթեր ներկայացնել։ Դժվարին հանգամանքներում հիշյալ փաստաթղթերը կարող են ներկայացվել 6 օրվա ժամկետից վոչ ուշ։

9. Գործավորները, վորոնք հիվանդացել են աշխատանքի ժամանակ, այդ մասին նրանք՝ պետք է իրենց անմիջական ղեկավարի միջոցով հայտնեն վարչության և աշխատանքը թողնելու համար թույլտվություն ստանան։

10. Անձնական գործերով աշխատանքից հեռանալը և բանվորական ժամերին արհեստակցական կամ խորհրդային պարտականություններ կատարելը՝ տեղի յե ունենում միայն վարչության թույլտվությամբ։

11. Վոչ հարգելի պատճառներով աշխատանքի չգնալը և նմանապես աշխատանքից ինքնակամ հեռանալը՝ համարվում է կամայական բացակայություն (прогул), սրանից բղխող իր բոլոր հետևանքներով։

Ծանոթ.—Աշխատանքի չգալու կամ ուշանալու պատճառների հարգելի կամ վոչ հարգելի լինելը վորոշում է ԳԿՀ.

12. Աշխատանքի գնալու և աշխատանքից հեռանալու վրա սահմանվում է վերահսկում. վերահսկման միջոցները վորոշվում են ըստ տեղական պայմանների։



## Գ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊՐՈՑԵՍՈՒՄ ԳՈՐԾԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13. Գործավորները պետքե ամենայն ճշտությամբ և լիովին կատարեն իրենց վրա դրված պարտականությունները՝ համաձայն նրանց սակագիր բնույթի և մըշակույթի նորմայի։

14. Աշխատանքի ժամանակ՝ վարչության բոլոր պահանջները պետքե կատարվեն անհակաճառ կերպով. իսկ յեթե գործավորը այդ սխալ է համարում, այն ժամանակ նա առանց աշխատանքն ընդհատելու, դրա դեմ կարող է բողոքել լիազորին կամ բանկոմին։

15. Գործավորները պարտավոր են խնամքով վարվելու գործիքների, նյութերի, մեքենաների, պատկանելիքների և այլ պարագաների հետ, վորոնցից նրանք օգտվում են աշխատանքի ժամանակ. տնտեսել դրանք և նրանց փչացման հնարավորության դեպքում, իր ժամանակին վարչությանը զգուշացնել վորպեսզի արվին նախազգուշացման միջոցներ և նմանապես սպեցհագուստից օգտվելու կանոնները պետք է պահեն ճշտությամբ։

16. Գործավորները մեքենաների կամ այլ պարագաների հետ վարվելիս, դժբախտ դեպքերից խուսափելու համար, պետք է ճշտապահությամբ պահեն նախազգուշացման միջոցները։

17. Յուրաքանչյուր աշխատանք, վոր անձնական բնույթ ունի—չի թույլատրվում։

18. Գործավորները պետք է քաղաքավարի վարվեն հիմնարկի և ձեռնարկի թղթակիցների և վարչության հետ։

## Գ. ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ

19. Ձեռնարկի և հիմնարկի վարչությունը պետք է քաղաքավարի վարվի գործավորների հետ՝ անկախ նրանց պաշտոնից:

20. Բացարձակ կերպով արգելվում է գործավորների աշխատանքներից օգտվել անհատական նպատակների կամ վարչության շահերի համար (ջուր կրել, բնակարաններ հարդարել, մթերքներ գնել կամ պատրաստել:

21. Չի թույլատրվում աշխատանքի մեջ միջամտելու այն անձերին, վորոնք լիազորված չեն ձեռնարկությունը կամ հիմնարկությունը վարելու:

22. Ձեռնարկի կամ հիմնարկի ծառայական բոլոր շենքերը պետք է կատարյալ կերպով մաքուր պահվեն, վորի համար վարչությունը և իրենք գործավորները պետք է ձեռք առնեն համապատասխան միջոցներ:

Վարչական և միութենական մարմինների ամեն տեսակի հայտարարությունները պետք է կախվեն վորոշված տեղերում:

Նմանապես կերակուրն ընդունելու համար պետք է հատկացված լինեն վորոշ տեղեր:

## Դ. ՊԱՏԺԻ ՉԱՓԸ ՆԵՐՔԻՆ ԻՐԱԿԱՐԳԻ (распорядок) ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

23. Ներքին իրակարգի կանոնները խախտելու և պաշտոնի վերաբերյալ պարտազանցության ու զանցառության համար, վորոնք քրեական հանցագործու-



թյան բնույթ չեն կրում, մեղավորներն յենթարկվում յեն հետևյալ պատիժներին—

ա) Նկատողության.

բ) հանդիմանության.

գ) խիստ հանդիմանության.

դ) հանդիմանության, բայց միաժամանակ հրապարակելով այն՝ հրամանի մեջ.

յե) պաշտոնի ցածր կարգի տեղափոխության և

զ) ծառայությունից արձակման.

24) Պատիժները ա, բ, գ, դ. կետերի համաձայն՝ տալիս է ձեռնարկի կամ հիմնարկի վարչությունը. իսկ յե, զ կետերի համաձայն՝ նրանք կատարվում են ԳԿՀ-ի վճռով:

25. Ներգործման հիշյալ միջոցները կիրառվում են.

Նկատողություն յեվ հանդիմանություն—իր ժամանակին գործի չգնալու և ինքնակամ կերպով 10 րոպե հեռանալու համար, սահմանված ժամից առաջ մեկից մինչև յերեք անգամ աշխատանքը ընդհատելու համար, ծառայության նկատմամբ՝ զանցառության համար, անգործ ման գալու և ուրիշներին գործից քցելու համար, առողջապահական կանոնները չպահելու և ներքին իրակարգի կանոնները չպահելու այլ դեպքերի համար:

Խիստ հանդիմանություն յեվ հանդիմանություն, բայց հրապարակելով այն՝ հրամանի մեջ—ներքին իրակարգի կանոնները սիստեմատիկորեն չկատարելու համար, սիստեմատիկորեն ուշանալու համար, առանց հարգելի պատճառների ամսվա ընթացքում՝ մեկից մինչև յերեք անգամ գործի չգնալու համար (աշխատավարձը պահելով), անփութության պատճառով գործիքները և պատկանելիքները փչացնելու համար. դեպի իր

ձեռքի գործը անփույթ վերաբերմունքի համար, վարչության ծառայական կարգադրությունները կատարելուց՝ հրաժարվելու համար։

*Պաշտոնի ցածր կարգին տեղափոխելը*—սահմանված նորմաները սիստեմատիկ կերպով չարտադրելու համար, ձեռքի գործի նկատմամբ՝ սիստեմատիկորեն անփույթ վերաբերմունքի համար, որը առաջացնում է արտադրության շահերի խախտումն, առանց հարգելի պատճառների՝ ամսի ընթացքում յերեք անգամից ավելի աշխատանքի չգնալու համար (աշխատավարձից համապատասխանորեն յետ պահելով), վարչության կարգադրությունները կրկնակի չկատարելու համար։

*Ծառայությունից արձակումն*—գործավորի ակներև անպետքությունը աշխատանքի համար պարզվելու դեպքում, առանց հարգելի պատճառների աշխատանքի չգնալու դեպքում՝ իրար հետևից 3 որից ավելի կամ ամսի ընթացքում 6 որից ավելի։

26. Յենթարկյալների աշխատանքը վարչության կողմից անձնական կարիքների նպատակով օգտագործելու համար, սխալ կերպով պատժի յենթարկելու համար, ծառայական պարտականությունները կատարելու ժամանակ՝ գործավորները վարչության կամ վարչությունը գործավորներին, կոպիտ վարմունք ցույց տալու կամ վիրավորանք հասցնելու համար, մեղավորները յենթարկվում են--առաջին անգամ հանդիմանության՝ հրամանի մեջ հրապարակելով այն, իսկ կրկնվելու դեպքերում, պաշտոնափոխության կամ պաշտոնից արձակման։

27. Սույն կանոնադրությունը պարտավորեցուցիչ է յերկու կողմերի համար և ձեռնարկների կամ հիմնարկների մեջ աչքի ընկնող տեղում, ի տեղեկություն նրանց մեջ աշխատողների, պետք է կախվի այս, որպես հավելված հավաքական պայմանագրին և գոյություն ունեցող աշխատանքի օրենսդրության։



28. Վոչ վոք իրավունք չունի առարկել, թե չի իմացել ներքին իրակարգի կանոնները։

23 դեկտեմբերի, 1924 թ.

ՓՀԺԿ՝ Մուսատով

Միության ԿԿ Մանցիվոդո

Հավելված № III

# ՍՊԵՑ ՀԱԳՈՒՍՏԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ ԿԱՊԻ ԳՈՐԾԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

| №№ կարգի | Արհեստների անունները | Առարկաների անունները | Հագնելու ժամկետը | Ծանոթ. |
|---|---|---|---|---|
| | **Փոստ** | | | |
| 1 | Ճռուղիներով փոստ տեղափոխող գործավորներ: | Բրեզենտի վերարկու . . . .<br>Բուրք . . . . .<br>Վալենկաներ .<br>Տաք թաթպաններ . . . . .<br>Տաք գդակ . . | 2 տարի<br>3 »<br>2 »<br>1 »<br>2 » | Տրվում է ճանապարհ գնալու ժամանակ: |
| 2 | Փոստը կայարաններ տեղափոխող գործավորներ: | Կիսամուշտակ .<br>Վալենկաներ . | 3 »<br>2 » | |
| 3 | Ձիաքարշ բաց վագոններով փոստը տեղափոխող գործավորներ: | Բուրք . . . . .<br>Վալենկաներ .<br>Տաք թաթպաններ . . . . .<br>Տաք գդակ . . | 4 »<br>2 »<br>2 »<br>3 » | Նույնպես: |
| 4 | Փոստային վագոնների փոստատարները: | Խալաթ պինդ կտորից . . . | 1 » | |
| 5 | Փոստային կապոցները ընդունող և բաց թողնող գործավորները և նմանապես այն գործավորները, վորոնք փոստային թղթակցությունների քանդելով, կապելով և ուղարկելով են զբաղված՝ բանվորական ամբողջ օրի ընթացքում: | Խալաթ՝ բամբակյա գործվածքից . . . | 1 տարի | |
| 6 | Փոստարկղները դատարկելու համար վոտքով գնացող նամակատարները և փոստատարները | Կաշյա կոշիկներ մի զույգ ներբանով (подошва) . . .<br>Վալենկաներ մի զույգ ներբանով . . . . .<br>Բրեզենտի վերարկու . . . | $1\frac{1}{2}$ »<br>2 ձմեռ<br>2 տարի | |
| 7 | Փոստի բեռնակիրներ: | Կիսամուշտակ .<br>Բրեզենտի կոստյում . . . .<br>Վալենկաներ շուրջը կաշի գցած . . . .<br>Կաշյա թաթպաններ . . . .<br>Կաշյա կոշիկներ մի զույգ ներբանով . . . | 2 »<br>1 »<br>2 ձմեռ<br>6 ամիս<br>$1\frac{1}{2}$ տ. | |

| №№ կարգի | Արհեստների անունները | Առարկաների անունները | Հագնելու ժամկետը | Ծանոթ. |
|---|---|---|---|---|
| | **Հեռագիր, ռադիո-հեռագիր յեվ հեռախոս** | | | |
| 8 | Հեռագրական թղթակցությունների գրիչները: | Կաշյա կոշիկներ մի զույգ ներբանով . . . . .<br>Վալենկաներ մի զույգ ներբանով . | 1½ տարի<br>2 ձմեռ | |
| 9 | Ակկումուլյատորը լարող բանվորները: | Կաշյա ձեռնոցներ . . . . . .<br>Բրեզենտի գոգնոց . . . . .<br>Ռետինե ձեռնոցներ . . . . . . | 4 ամիս<br>6 »<br>6 » | Բարձր լարվածության հոսանքի աշխատանքների ժամանակ |
| 10 | Ելեկտրահավաք մարտկոցների (аккумуляторная батарея) մեքենավարները և բանվորները: | Ռետինե կրկնակոշիկներ . . .<br>Ռետինե ձեռնոցներ . . . . . . | 1 տարի<br>1 » | |
| 11 | Ապարատների մեխանիկները, վերակացուները (կայարանների) և մաքրողները: | Խալաթ՝ բամբակյա գործվածքից | 1 » | |
| 12 | Գծի վերակացուները, կայմի վրա աշխատողները և նրանց մոտ յեղած շտատի բանվորները: | Կիսամուշտակ .<br>Վալենկաներ . .<br>Տաք ձեռնոցներ.<br>Բամբակով շինված շալվարներ.<br>Տաք գդակ . . .<br>Բրեզենտի պլաշչ | Տրվում են պատահական վնասվածները կարգի բերելու համար ճանապարհ գնալու ժամանակ: | 2 ձմեռ |
| 13 | Կենտ. կայարան. կառուցման վրա աշխատող ելեկտրոմոնտյորները: | Ռետինե կրկնակոշիկներ . . .<br>Ռետինե ձեռնոցներ . . . . . . | 1 տարի<br>6 ամիս | |
| 14 | Ոդային ցանցով ելեկտրականություն անցկացնողները: | Ռետինե կրկնակոշիկներ . . .<br>Ռետինե ձեռնոցներ . . . . . . | 1 տարի<br>6 ամիս | |
| 15 | Կաբել անցկացնողները: | Ռետինե կրկնակոշիկներ . . .<br>Ռետինե կոշիկներ . . . . . . | 6 »<br>Ջրում աշխատելու ժամանակ՝ ըստ հարկավորության. | |
| 16 | Կաբելի մոնտյորները: | Ռետինե կրկնակոշիկներ . . .<br>Ռետինե կոշիկներ . . . . . . | 6 ամիս<br>Ջրում աշխատելու ժամանակ՝ ըստ հարկավորության. | |
| 17 | Ելեկտրակ. կայարաններին, խոշոր ելեկտրոշարժիչներին կայլոց տարնթեր՝ ելեկտրամեքենավարները: | Ռետինե կրկնակոշիկներ . . .<br>Ռետինե ձեռնոցներ. . . . . | 1 տարի<br>1 » | |

| №№ կարգի | Արհեստների անունները | Առարկաների անունները | Հագնելու ժամկետը | Ծանոթ. |
|---|---|---|---|---|
| 18 | Բաշխողական վահանին առընթեր՝ հերթապահ ելեքտրոտեխնիկները և այլն: | Ռետինե կրկնակոշիկներ . . .<br>Ռետինե ձեռնոցներ . . . . . . | 1 տարի<br>1 » | |
| 19 | Բարձր լարվածության ելեքտրական կառուցվածքների ելեքտրամեքենավարները: | Ռետինե կրկնակոշիկներ . . .<br>Ռետինե ձեռնոցներ . . . . | 1 »<br>1 » | |
| 20 | Նավթի հնոցների հնոցապանները (կոչեգարները): | Բրեզենտի գոգնոց . . . . . . | 1 » | |
| | **Արհեստանոցներ, պահեստներ, գարաժներ յեվ ձիու-փոխային կայարաններ** | | | |
| 21 | Գալվանական միջոցով նիկելողներ և ցինկողներ: | Կաշյաթաթպաններ . . . . .<br>Բրեզենտի գոգնոց. . . . . | 4 ամիս<br>6 » | |
| 22 | Զոդողներ (паяльщики) մշտական աշխատանքների ժամանակ: | Բրեզենտի թաթպաններ . . .<br>Բրեզենտի գոգնոց . . . . . . | 2 »<br>1 տարի | |
| 23 | Հղկողները, սրողները և չոր միջոցով փորկողները: | Նախազգուշական ակնոցներ<br>Կոստյում . . . . | Մեծ քանակությամբ փոշի լինելու դեպքում: | |
| 24 | Դարբիններ և մուրճ խփողներ: | Կաշյա գոգնոց .<br>Կաշյա թաթպաններ . . | 1 տարի<br>2 ամիս | |



| №№ կարգի | Արհեստների անունները | Առարկաների անունները | Հագնելու ժամկետը | Ծանոթ. |
|---|---|---|---|---|
| 25 | Փոստը ձիուկներով քշողները (յամշչիկները): | Բրեզենտի պլաշչ<br>Կաշյաթաթպաններ . . . . .<br>Բուրք . . . . . .<br>Վալինկաներ կաշիով պատած .<br>Տաք գդակ . . . | 2 տարի<br>6 ամիս<br>3 տարի<br>2 ձմեռ<br>2 տարի | |
| 26 | Կառապաններ: | Բրեզենտի պլաշչ<br>Բրեզենտի թաթպաններ . . .<br>Բուրք . . . . .<br>Տաք գդակ . .<br>Վալինկաներ . .<br>Բրդի ձեռնոցներ | 2 »<br>1 »<br>3 »<br>3 »<br>2 ձմեռ<br>1 տարի | |
| 27 | Ձիապաններ: | Բաթանի վերնաշապիկ . . . .<br>Բրեզենտի գոգնոց . . . . .<br>Կաշյա կոշիկներ<br>Կաշյաթաթպաններ . . . . . . | 1 »<br>1 »<br>1 »<br>1 » | |
| 28 | Շոֆերներ և նրանց օգնականներ: | Կաշյա կոստյում<br>Կաշյա թաթպաններ պաճիճներով . . .<br>Գդակ ականջապանակներով.<br>Մուշտակ . . . .<br>Վալինկաներ . .<br>Տաք թաթպաններ . . . . . .<br>Նախազգուշական ակնոցներ | 2 »<br>2 »<br>3 »<br>3 »<br>2 »<br>2 »<br>Ըստ հարկավորության | |

| №№ կարգի | Արհեստների անունները | Առարկաների անունները | Հագնելու ժամկետը | Ծանոթ. |
|---|---|---|---|---|
| 29 | Մոտոցիկլիստներ։ | Կաշվա կոստյում | 2 տարի | |
| | | Կաշվա թաթպաններ պաճիճներով . . . . . . | 2 » | |
| | | Կիսամուշտակ . . | 3 » | |
| | | Գդակ ականջապանակներով . | 3 » | |
| | | Տաք թաթպաններ . . . . . . | 2 » | |
| | | Նախազգուշական ակնոցներ | Ըստ հարկավորության | |
| 30 | Թամբագործներ (шорники)։ | Բրեզենտի թեթև գոգնոց . . . . | 6 ամիս | |
| 31 | Դռնապաններ։ | Կաշվա կոշիկներ. | 1½ տարի | |
| | | Կաշվա թաթպաններ . . . | 6 ամիս | |
| | | Կիսամուշտակ . | 3 տարի | |
| | | Գոգնոց . . . . . | 1 » | |
| 32 | Դրսի պահապաններ կամ նրանց պարտականությունները կատարող դռնապաններ։ | Բուրկ . . . . . | 3 » | |
| | | Անթափանցիկ պլաշչ . . . . | 2 » | |
| | | Վալենկաներ կաշիով պատած . | 2 ձմեռ | |
| | | Տաքգդակ ականջապանակներով | 2 տարի | |
| | | Տաք թաթպաններ . . . . . . | 6 ամիս | |
| 33 | Կենտրոնական վառարան վառողները։ | Բրեզ. խալաթ . | 1 տարի | |
| | | Բրեզ. թաթպաններ . . . . . | 6 ամիս | |



| №№ կարգի | Արհեստների անունները | Առարկաների անունները | Հագնելու ժամկետը | Ծանոթ. |
|---|---|---|---|---|
| 34 | Պահեստների բանվորները և ապրանք ծրարողներն։ | Բրեզ. խալաթ . | 6 ամիս | |
| | | Բրեզ. թաթպաններ . . . . . | 6 » | |
| 35 | Ռոտատորի վրա աշխատողներն։ | Բամբակ. խալաթ | 1 տարի | |
| 36 | Հարդարողներ (уборщицы)։ | Բամբակ. խալաթ | 1 » | |
| 37 | Գործակալներ, հրահաններ և վերաքննիչներ։ | Բրեզ. վերարկու Վալենկաներ . . | Ճանապարհ յերթալու ժամանակ | |
| 38 | Պահապան-հարդարողներ և պահապան-թղթատարներ։ | Կաշվա կոշիկներ մի զույգ ներբանով . . . . | 1½ տարի | |

*Ծանոթ.* 1.—Սույն ցանկում չհիշատակած բոլոր արհեստները սպեց-հագուստ ստանում են համապատասխան միությունների ցանկերի համաձայն։

2. Սպեց-հագուստի մանր իրերը, ինչպես օրինակ—բրդի ձեռնոցներ, թաթպաններ, գոգնոցներ, գդակներ, կրկնակոշիկներ, վալենկաներ, կաշվա կոշիկներ, բամբակով շինած շալվարներ, խալաթներ—հագնելու ժամկետի ընթացքում նորոգում են իրենք բանվորները. իսկ հագնելու ժամկետը լրանալուց հետո՝ դառնում են գործավորի սեփականություն։

Սպեցհագուստի խոշոր իրերը, ինչպես օրինակ՝ քուրքեր, կիսամուշտակներ, բրեզենտի վերարկուներ և պլաշչներ, ռետինի կոստյումներ և կոշիկներ—նորոգվում են ՓՀԺԿ-ի հաշվին և գործավորի սեփականություն չեն դառնում։

3. Վալենկաներ կարող են չտրվել ՍՍՀՄ միայն հարավային նահանգներում և շրջաններում—Ղրիմում, Թուրքեստանում և Կովկասում, ըստ վարում, այդ դեպքում մի զույգ ներբանով կաշյա կոշիկների հագնելու ժամկետը կրճատվում է մինչև 1 տարի։

23 դեկտեմբերի, 1924 թ.

ՓՀԺԿ Մուսատով
Կապի ԺԿ Մանցեվիչ



Համե.

ըկա-

Դա-

## ՓՀԺԿ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ ԸՍՏ ԿԱՐԳԵՐԻ

### Կարգից դուրս

1. Փոստամատներ և Մոսկվայի ու Լենինգրադի կենտրոնական հեռագրական գրասենյակները։
2. Փոստային և հեռագրական գրասենյակները, վորոնց գործավորների թիվը 500-ից բարձր է։
3. Հոկտեմբերյան, Մոսխորհուրդի և Կոմինտերնի ռադիո-կայարանները։
4. Հեռախոսի կայարանները, վորոնց աբոնենտների քանակը 5,000-ից ավելի յե։

### 1-ի կարգի

1. Փոստային, հեռագրական, փոստ-հեռագրական գրասենյակները և յերկաթուղու փոստային բաժանմունքները, վորոնց գործավորների թիվը 200-ից ավելի յե։
2. Տաշքենդի, Նոր-Նիկոլաևսկի և Դետսկոսելսկի ռադիո-կայարանները։
3. Հեռախոսի կայարանները, վորոնց աբոնենտների քանակը 1000-ի ավելի յե։

### 2-րդ կարգի

1. Փոստային, հեռագրական և փոստ-հեռագրական գրասենյակները և յերկաթուղու փոստային բա-

Սպեցհագուստի խոշոր իրերը, ինչպես օրինակ՝ քուրքեր, կիսամուշտակներ, բրեզենտի վերարկուներ և պլաշչներ, ռետինի կոստյումներ և կոշիկներ—նորոգվում են ՓՀԺԿ-ի հաշվին և գործավորի սեփականություն չեն դառնում։

3. Վալենկաներ կարող են չարվել ՍԽՀՄ միայն հարավային նահանգներում և շրջաններում—Ղրիմում, Թուրքեստանում և Կովկասում, ըստ որում, այդ դեպքում մի զույգ ներքանով կաշվա կոշիկների հագնելու ժամկետը կրճատվում է մինչև 1 տարի։

23 դեկտեմբերի, 1924 թ.

ՓՀԺԿ Մոսստով
Կապի ԺԿ Մանցեվտղո





# ՓՀԺԿ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ ԸՍՏ ԿԱՐԳԵՐԻ

## Կարգից դուրս.

1. Փոստամատներ և Մոսկվայի ու Լենինգրադի կենտրոնական հեռագրական գրասենյակները։

2. Փոստային և հեռագրական գրասենյակները, որոնց գործավորների թիվը 500-ից բարձր է։

3. Հոկտեմբերյան, Մոսխարհուրդի և Կոմինտերնի ռադիո-կայարանները։

4. Հեռախոսի կայարանները, որոնց աբոնենտների քանակը 5,000-ից ավելի չէ։

## 1-ի կարգի

1. Փոստային, հեռագրական, փոստ-հեռագրական գրասենյակները և յերկաթուղու փոստային բաժանմունքները, որոնց գործավորների թիվը 200-ից ավելի չէ։

2. Տաշքենդի, Նոր-Նիկոլաևսկի և Դետսկոսելսկի Ռադիո-կայարանները։

3. Հեռախոսի կայարանները, որոնց աբոնենտների քանակը 1000-ի ավելի չէ։

## 2-րդ կարգի

1. Փոստային, հեռագրական և փոստ-հեռագրական գրասենյակները և յերկաթուղու փոստային բա-

ժանմունքները, վորոնց գործավորների քանակը 100-ից ավելի չէ։

2. Խարկովի, Ռոստովի, Կուշկի, Օրենբուրգի, Հաշտարխանի և Սվերդլովի Ռադիո-կայարանները։

3 Հեռախոսի կայարաններ, վորոնց աբոնենտների քանակը 500-ից ավելի է։

### 3-րդ կարգի

1. Փոստային, հեռագրական և փոստ-հեռագրական գրասենյակները և յերկաթուղու փոստային բաժանմունքները, վորոնց գործավորների քանակը 40-ից ավելի չէ։

2. Սմոլենսկի, Կիևի, Սիմֆերոպոլի, Ֆորտ-Ուրիցկի, Սարատովի, Միջ.-կալմիկսկի և Յակուտսկի Ռադիո-կայարանները։

3. Հեռախոսի կայարանները, վորոնց աբոնենտների քանակը 250-ից ավելի չէ։

### 4-րդ կարգի

1. Փոստ-հեռագրական գրասենյակներ և յերկաթուղու փոստային բաժանմունքներ, վորոնց գործավորների քանակը 15-ից ավելի չէ։

2. Բախմուտի, Պոլտավսկու, Օդեսայի, Վլադիկավկազի, Ուրգայի, Սեմիպալատինի, Ալթբասարի, Ցարիցինի, Սամարի, Ուֆիմի, Վյատկայի, Ուստ-Սիսոլսկու և Պետրոպավլովսկու Ռադի-կայարանները։

3. Հեռախոսի կայարաններ, վորոնց աբոնենտների քանակը 100-ից ավելի չէ։



### 5-րդ կարգի

1. Փոստ-հեռագրական գրասենյակները և յերկաթուղու փոստային բաժանմունքները, վորոնց գործավորների քանակը 7-ից ավելի չէ։

2. Ընդունող Ռադիո-կայարաններ։

3. Հեռախոսի կայարաններ, վորոնց աբոնենտների քանակը 50-ից ավելի չէ։

### ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐ

1. Փոստ-հեռագրական և փոստ-հեռախոսական և յերկաթուղային, վորոնց գործավորների քանակը մինչև 7-ն է։

2. Հեռագրական.

3. Փոստային.

Ծանոթ.—Այն դեպքերում, երբ գործավորների կամ աբոնենտների քանակը չկարողանա ճիշտ կլասիֆիկացիայի հատկանիշ լինել, թույլատրվում է այս դասավորման շեղումն՝ ինչպես հօգուտ ձեռնարկությունների կարգերի բարձրացման, նույնպես և նրանց ցածրացման. ըստ վորում՝ յերկու դեպքումն էլ պահանջվում է ՓՀԺԿ-ի և Կապի ԿԿ-ի համաձայնությունը։

23 դեկտ. 24 թ.

Փ և ՀԺԿ Մոսսատով

Կապի ԿԿ Մանցիվոդս

## ՑԱՆԿ

### ԱՅՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ, ՎՈՐՈՆՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՁԵԶՈՔԱՑՆՈՂ ՍՆՈՒՆԴ (ՄՇՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ)։

1. *Արծնողները* (травильщики).
2. *Կլայեկողները.*
3. *Ցինկողները.*
4. *Քիմիական միջոցով փորագրողները* (оксидировщики).
5. *Կապարյա իրերը զոդող բանվորները.*
6. *Կաբելների զոդողները.*
7. *Կապարյա ակկումուլյատորների զոդողները.*
8. *Ակկումուլյատորներ լարողները։*

*Փ. և ՀԺԿ Մուսատով*

*Կարի Կ. Կ. Մանցիվոդո*

23/XII—24 *թ.*





## ՑԱՆԿ

### ԱՅՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ, ՎՈՐՈՆՔ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՎԻ ՀՈԴՎ. *15-Ի*։

*(Մշտական աշխատանքի դեպքում).*

1. *Հեռագրիչներ, վորոնք աշխատում են Յուզ և Բոդո ապարատների վրա։*
2. *Ույիտստոնի հեռագրիչները, վորոնք աշխատում են պերֆորատորի վրա։*
3. *Հեռագրիչները, վորոնք աշխատում են Մորզե և Կլոպֆեր ապարատների վրա ժամը վոչ պակաս քան 200 բառերի ծանրաբեռնումով։*
4. *Սիմենսի—Գունշերի հեռագրիչները։*
5. *Ռադիո—հեռագրիչները, վորոնք աշխատում են՝ ա) Խարկովի, նմանապես և Լենինգրադի և Մոսկվայի ապարատների վրա, բ) Խտացած ռադիո-կայարաններում՝ ժամը վոչ պակաս քան 150 բառերի ծանրաբեռնումով։*
6. *Մայրաքաղաքների. նահանգական քաղաքների կենտրոնական կայարաններում և միջքաղաքային կայարանների կոմուտատորների վրա աշխատող հեռախոսուհիները։*
7. *Ժապավենու արհեստանոցների բանվորները (բավականաչափ ոդափոխության բացակայության դեպքում)։*

8. Ակկումուլյատորային բաժանմունքների բանվորները և նրանց պարպողները (разрядник)։

9. Կապարը մշակող բանվորները։

10. Արծնողները։

11. Վոչ գալվանական միջոցով նիկելողները։

12. Զմրուխտի (նաժդակ) և կարբորունդի քարերի (ածուխով կայծքար) վրա չոր ձևով սրող և մետաղը փողորկող բանվորները (հատուկ փոշի հավաքող հարմարությունների բացակայության դեպքում)։

13. Կիանային վաննաներով գալվանական շերտավորողները։

14. Զոդողներ, կլայեկողներ, պղնձագործներ, վուլկեգոցողներ (տաք միջոցով)։

15. Ցինկողները (տաք միջոցով)։

16. Հիմնական աշխատանք ունեցող դարբիններ, մուրճ զարկողներ (քուրայի ծուխը և այրման նյութերը հեռացնող հարմարությունների բացակայության դեպքում)։

Ծանոթ.—Մշակման նորման, վոր Մորզեյի և Ռադիոյի հեռագրիչներին իրավունք է տալիս ստանալու լրացուցիչ արձակուրդ, վորոշվում է ընթացիկ տարվա վերջին 3 ամսում մշակված բառերի ընդհանուր քանակի բաժանումով ապարատների թվի վրա և հիշատակած ժամանակի փաստական աշխատանքի ժամերի քանակի վրա, այսինքն՝ գործողության ժամանակից հանվում է կայարանական և գծային վնասվածների ժամանակ՝ ապարատների անգործության ժամերի թիվը։

Փ. և ՀժԿ Մուսատով

Կապի Կ. Կ. Մանցիվոդո

23/XII—24 թ։





## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ԱՅՆ ԱՆՁԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՎՈՐՈՆՔ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՄՇՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ Ս. Խ. Հ. Մ. ՀԵՌԱՎՈՐ ՅԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏՈՎ ՎՆԱՍԱԿԱՐ ՎԱՅՐԵՐԸ

1. Սույն համաձայնությունը տարածվում է Փ. և ՀժԿ-ի հեռավոր և կլիմայական տեսակետով վնասակար վայրերում գտնվող ձեռնարկների ու հիմնարկների գործավորների վրա, ինչպես մինչև ներկա համաձայնության մոմենտը աշխատանքի ընդունվածների, նույնպես և նոր ընդունվողների վրա—վորպես լրացում Համառ. Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1923 թվի 25 հուլիսի վորոշմանը՝ հեռավոր վայրերի պաշտոնի մասին։

Ծանոթ.—Համառուսակ. Կենտգործկոմի և Ժողկոմխորհի վորոշումը յուր ամբողջ ծավալով տարածվում է վոչ միայն ձեռնարկությունների պետերի վրա, այլ և բոլոր գործավորների վրա, վորոնք 1923 թվի հուլիսի 25-ից հետո՝ ուղարկված են հեռավոր վայրերը մշտական աշխատանքների համար։ Այդ վորոշմամբ արտոնություններ ստանալու համար սահմանված բոլոր ժամկետները, հաշվում են գործավորի հեռավոր վայրը գալու որից, սակայն վոչ վաղ քան 1923 թ. հուլիսի 25.

2. Համաձայնությունը կնքվում է 11 ամսով և ուժի մեջ է մտնում 1924 թվի նոյեմբերի 1-ից:

3. Հեռավոր վայրերը մշտական աշխատանքի ուղարկվողներին, բացի այն արտոնություններից, վոր նախատեսված է Համառուս-Կենտկործկոմի և Ժողկոմխորհի վորոշման հոդվ. 2-րդ կ. «ա»՝ տրվում է և դրամական թոշակի բոլոր տեսակները Հավաքական պայմանագրի հոդվ. 23-րդի կարգով:

*Ծանոթ.*—1. Հեռավոր կամ կլիմայական տեսակետով վնասակար միևնույն շրջանի վայրերի սահմաններում, գործուղումների և տեղափոխումների դեպքում՝ գործավորին տրվում է թոշակի բոլոր տեսակները, համաձայն՝ Հավաքական պայմանագրի հոդվ. 23-ի. աշխատանքի նոր վայրը գալուց հետոյ, նրանք աշխատավարձը ստանում են միտակ չափով:

2. Գործավորները շտատի համաձայն կրճատման յենթարկվելու դեպքում, պետք է հետ ուղարկվեն այն վայրը, վորտեղից նրանք գործուղվել կամ տեղափոխվել են:

4. Ծառայության ժամկետը սահմանվում է.

ա) *մի տարի*—այն ձեռնարկների և հիմնարկների համար, վորոնք գտնվում են—

*Միջին Ասիայի շրջանում*— Նոր և Հին Բուխարա, Կարշի, Տերմեզ, Կուշկա, Յոլաթան, Թաղտաբազար, Միրզաչուլ, Գուլ՛չա, Իրկեշտամ, Գաուդան.

*Միջին Սիբիրում*—Բաշ-Ագաչ.

*Արևելյան Սիբիրում*— Թուրուխանի յերկիր, Վերխոլենսկի և Միջին Կոլիմսկի գավառները.



*Ուրալում*—Ցելիզարովսկոյե, Կոնդինսկոյե, Բերեզովսկոյե, Կուշեվատսկոյե, Մուժի, Օբդորսկ, Տունդրինո, Սուրգուտսկոյե, Ն—Լումպոկոլսկոյե, Սուրգուտսկի գավառի Բերիզովսկոյե, Տոբոլի շրջանի Սամարովսկոյե գյուղերը:

*Հյուսիս-Արևմուտքում*—Մուրմանի յերկիր (բացի Մուրման քաղաքից) Արևելյան և Տերսկի ափերով և Կեմսկի գավառը:

*Ծանոթ.*—Մուրման քաղաքում ծառայության ժամկետը սահմանվում է՝ 2 տարի:

*Անդրկովկասում*— Անակլիա, Կեդի, Նոտանեբի, Սուպսա, Կարա-Թափա, Ցնորիս-Ծղալի, Յեվլախ, Խաչմազ, Ջուլֆա:

բ) *Յերեկ տարի*—*Հարավ Արևելյան շրջանում*—Մախաչ-Կալա, Չիր-Յուրթ, Դերբենտ, Ախտինսկայա, Կասումկենտսկոյե, Մաջելիս, Բույնակ, Ջենգոտայևսկոյե, Լևաշի, Կումուխ, Գուդախար, Գունիբ, Խունձախ, Բոտլիխ, Խասաֆ-Յուրթ, Ղզլար, Ալեքսանդրիևսկայա, Գուդեր Մես, Դարգ-Կոխ.

*Միջին Ասիայում*—Չարժույ, Մերվ, Կրասնովոդսկ, Չելեկեն, Ուչ-Արալ, Սերախս, Տուրտկուլ, Նոր-Ուրգենչ, Խիվա, Դարգան-Աթա, Նարին, Ջիքիշլյար, Կերկի, Նամանգան, Մարգելան Կայար., Խավաստ.

*Կիրգիզյան շրջանում*—Ուրդա, Ֆորտ-Ուրիցկի, Գուրիև, Չելկար, Իրգիզ, Տուրգայ, Եմբա, Բերչուգուր, Ջուրուն, Թեմիր, Ջամբեյտա, Կարաթյուբե, Ուիլսկոյե, Կզիլկուգա, Լբիշչենսկի, Կալմիկով, Ժիլայա-Կոսա, Ջանյիբեգ, Նոր Կազանկա, Մ. Գանյուշկինո, Կուլագինո, Յամանխալինսկայա, Սախարնոյե և Ստեպնոյե.

Արեվելյան-Սիբիրայի—Յակուտսկու շրջան, ներքին Իլիմսկի յերկիր, Կիրենսկի և Յենիսեյսկի գավառներ.

Հյուսիսային—Պեչյերսկի, Մեզենսկի, Պինեժսկի և Օնեժսկի գավառները և Արխանգելսկի գավառի և նահանգի ձմեռային ափի ձեռնարկությունները և նըմանապես Կոմի շրջանը:

Անդրկովկասյան.—Բեկյասուվար, Պրոլետարսկի Պրոմխոզ, Զյուգ-Ոստով-Կուլտուկ, Բյուրդամիր, Պետրոպավլովկա, Սագիրի, Սալյանի, Ագդամ, Աստարա, Աղստաֆա, Բարդի, Կյակի, Տերտեր, Ղամարլու, Էջմիածին, Բաշ—Նորաշեն, Շախտախտի, Սուխում, Օչեմչիրի, Բախվի, Նիգոյիտի, Լանչխուտի և Կոբուլեթի:

գ) Մնացած վայրերում, վորոնք թված են Համառուս. Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1923 թ. հուլիսի 25-ի վորոշման մեջ— առանց ժամանակի սահմանափակման:

5. Աշխատավարձի չափը սահմանվում է շրջանի վարչության և Միության շրջանային վարչության ընդհանուր սակագիր համաձայնություններով:

6. Հյուսիս-Արևմտյան Շրջանի ձեռնարկությունների գործավորներին, վորոնք հիշատակված են սույն համաձայնության 4-րդ հոդվածի «ա» կետում, Փ և ՀԺԿ-ը ապահովում է միանգամայն պիտանի և հարմարեցրած շենքերով, սահմանված նորմայի համաձայն վառելիքով, լուսավորությամբ և անհրաժեշտ ինվենտարով: Գործավորների բնակարանների և համայնական ծառայությունների վարձատրությունը կատարվում է գոյություն ունեցող նորմաների համաձայն, վորը սակայն չի կարող հիմնական կոպարի $15^{0}/_{0}$-ից ավելի բարձրանալ.



7. Սույն համաձայնության 4-րդ հոդվածի «ա» և «բ» կետերում հիշատակված վայրերում, Առողջապահ. Ժողկոմատի հիմնարկությունների բացակայության դեպքում՝ Փ և ՀԺԿ-ը պարտավորվում է այնտեղ գտնված ձեռնարկներին և հիմնարկներին հայթայթել ապտեչկաներ՝ դեղորայքի անհրաժեշտ քանակությամբ:

Շտապփույթ բժշկական oգնության հասցնելու անհրաժեշտության և տեղում դրա բացակայության դեպքում, հիվանդացած Գործավորը Փ և ՀԺԿ-ի հաշվին անհապաղ պետք ուղարկվի մոտակա բժշկական պունկտը:

8. 4-րդ. հոդվածի «ա» կետում հիշատակված ձեռնարկությունների գործավորներին, տարվա ընթացքում մի անգամ վերապահվում է հերթական արձակուրդ՝ հետևյալ տևողությամբ—$5^{1}/_{2}$ ամսից մինչև 1 տարի աշխատանքի դեպքում—ամսական արծակուրդ. իսկ 1 տարուց ավելի՝ ամիս ու կես. 4-րդ հոդվածի «բ» կետում թվածներին՝ ամսական արձակուրդ:

Ծանոթ.— 4-րդ հոդվածի «ա» կետում հիշատակված վայրերի, նմանապես և Պեչյորսկի ու Մեզենսկի գավառների Գործավորներին արձակուրդի ժամանակ վերապահվում է գնալու և վերադառնալու հազար վերստ ճանապարհի ծախսը՝ Գործատեսչության հաշվին:

9. Ծառայության ժամկետը լրանալուց հետո, Գործավորները իրավունք ունեն վերադառնալու պաշտոնի նախկին վայրը, վորի մասին նոքա հայտարարում են տեղական վարչությանը վոչ ուշ քան Գործհղումի ժամկետը վերջանալուց յերկու ամիս առաջ:

Ծանոթ.—1. Այն դեպքում, յերբ բժշկական ստուգիչ հանձնաժողովների կողմից կճանաչվի անհրաժեշտ (Գործավորների դողով կամ ցինգայով հիվանդության դեպքում), 4-րդ հոդվածի «ա» և «բ» կետերում հիշատակված վայրերի Գործավորների շուտափույթ եվակուացիան, Փ և ՀԺԿ-ը պետք է ժամկետից առաջ՝ այդ Գործավորների տեղափոխությունը կատարի շրջանի առողջ վայրը, դրա մասին բժշկական համապատասխան փաստաթղթերով հաստատված դիմումը ստանալուց մի ամսվա ժամկետից վոչ ուշ:

2. Այն դեպքում, յերբ 4-րդ հոդվ. «ա» և «բ» կետերում հիշատակված ժամկետը ծառայելուց հետո՝ գործավորները իր ժամանակին հետ չեն ուղարկվում և վորոնք վարչությանը հայտարարել են նախկին պաշտոնավայրը վերադառնալու իրենց ցանկության մասին, նրանց հատուցանվում է գործհղման ժամկետը լրանալու որից մինչև նրանց փաստապես ուղարկելու մոմենտը, բացի աշխատավարձից և որապահիկներ:

3. Վերոհիշյալ համաձայնությունների զորությամբ ուղարկված անձերը պիտի հետ դարձնվեն իրենց նախկին պաշտոնավայրը, նույն այդ համաձայնությունների պայմանների հիմամբ:

10. Գործավորները գործհղումից վերադառնալու դեպքում, համաձայն հավաքական պայմանագրի հոդ. 23-ի՝ բավարարվում են տեղափոխության նպաստով և որապահիկով:

11. Գործավորները, վորոնք ներկա համաձայնության 4-րդ հոդվածում սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ տվել են իրենց համաձայնությունը կլիմայական տեսակետով ծանր վայրերում գործի մեջ



մնալու դարձյալ մի այդպիսի ժամկետ, այդ բանի հետ ձեռնարկի կամ հիմնարկի վարչության համաձայնության դեպքում, տրվում է միանվագ՝ սակացույցի կոպարի յերեք ամսականի նպաստ. յերկրորդ ժամկետը լրանալուց հետո—կոպարի յերկու ամսականի չափով. յերրորդ ժամկետը լրանալուց հետո՝ մի ամսականի չափով. իսկ հետագա աշխատանքների դեպքում՝ վոչ մի նպաստ չի տրվում և Գործավորները փոխվում են տեղական բնակչության դրության, այստեղից բղխող յուր բոլոր հետևանքներով:

12. Հիշյալ վայրերի տեղական բնակիչներից ծառայության վերցրած Գործավորների վրա՝ տարածվում են միայն սույն համաձայնության 2, 5, 7, 8 և 13 հոդվածները:

Ծանոթ.—Տեղական բնակիչներ ասելով հասկացվում են այն բոլոր գործավորները, վորոնք աշխատանքի ընդունվելու մոմենտում ապրելիս են յեղել տվյալ հեռավոր և կլիմայական տեսակետով ծանր վայրերի տերիտորիայում:

13. Սույն համաձայնությամբ չնախատեսված դեպքերում՝ կիրառվում են հավաքական պայմանագիրը և Համառուս-Կենտգործկոմի և Ժողկոմխորհի վերահիշյալ վորոշումը:

23/12—24 թ.

ՓՀԺԿ Մուսատով
Կապի ԿԿ Մանցիվոդո

Սույն պայմանագիրը տոմարագրված է Աշխժողկոմի հավաքական պայմանագրերի մատյանում 1925 թվի հունվարի 2-ին № 1. որը հաստատվում է ստորագրությամբ և Աշխժողկոմի կնիքով

ՍԽՀՄ Աշխժողկոմի Սակ.-կոնֆլ. Բաժնի վարիչ՝ Կորշունով

# ՑԱՆԿ

## 1. Հավաքական պայմանագիր

Յերես


ա) Ընդհանուր կանոններ . . . . . . . . . . 3
բ) Ընդունելություն և արձակում . . . . . . . 5
գ) Աշխատավարձ . . . . . . . . . . . . 7
դ) Գործուղումներ և տեղափոխումներ . . . . . 10
յե) Բանվորական ժամանակ . . . . . . . . . 13
զ) Աշխատանքի պաշտպանություն . . . . . . 13
է) Աշակերտություն . . . . . . . . . . . 28


## 2. Հավելվածներ


I Կանոնադրություն ԳԿՀ-ի մասին . . . . . . 32
II Ներքին իրակարգի ուղեցույց կանոններ . . . 37
III Սպեցհագուստի նորմաներ . . . . . . . . 44
IV Ձեռնարկությունների դասավորումը ըստ կարգերի . . . . . . . . . . . 53
V Ցանկ այն արհեստների, որոնք իրավունք ունեն ստանալու չեզոքացնող սնունդ . . . . 56
VI Ցանկ այն արհեստների, որոնք լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեն . . . . . . 57
VII Լրացուցիչ համաձայնություն այն անձերի արտոնությունների մասին, որոնք ուղարկվում են ՍԽՀՄ հեռավոր և կլիմայական տեսակետով վնասակար վայրերը՝ մշտական աշխատանքի . . . . . . . . . . . 59

2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0041900